



Բազմակողմանի  
տեղեկատվության ինստիտուտ

# ԹՎԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սամվել Մարտիրոսյան

Երեւան  
2023

ԹՎԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ  
ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սամվել Մարտիրոսյան

Ձեկույցի հեղինակային իրավունքները պատկանում են  
Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտին:  
Առանց նախնական թույլտվության զեկույցի ամբողջական կամ մասնակի  
վերահրատարակումը կամ այլ ձևով օգտագործելը արգելվում է:

© Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ

## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

<b>Նախաբան</b>	<b>4</b>
<b>Չամացանցի արգելափակման պատմությունը</b>	<b>5</b>
<b>Տվյալների արտահոսքեր</b>	<b>7</b>
<b>Տվյալների մշակումը և ալգորիթմների կիրառումը</b>	<b>8</b>
<b>Չայաստանի բջջային օպերատորները</b>	<b>10</b>
<b>Բջջային օպերատորների շուկայի մասնաբաժինները</b>	<b>11</b>
<b>Մեթոդաբանություն և հիմնական եզրահանգումներ</b>	<b>12</b>
<b>Քնահատում և միավորների նշանակում</b>	<b>25</b>
<b>Խոսքի և տեղեկատվության ազատություն</b>	<b>27</b>
<b>Գաղտնիություն</b>	<b>29</b>
<b>Ամփոփում</b>	<b>34</b>
<b>Չավելված</b>	<b>35</b>

## Նախաբան

Թվային իրավունքների թեման Հայաստանում լայնորեն քննարկվողներից չէ, քանի որ հայաստանցիների մեծ մասը պարզապես տեղյակ չէ դրանցից և իրենց բարեկեցության, քաղաքական իրավունքների և ժողովրդավարության ընդհանուր իրավիճակի վրա դրանց ազդեցությունից:

Թեև «Ֆրիդոմ հաուսի» (Freedom House)՝ «Ազատությունը համացանցում-2022» զեկույցում Հայաստանը դասվել է ազատ երկրների շարքին, այնուամենայնիվ, երկրում գոյություն ունեն թվային իրավունքների, գաղտնիության և հնարավոր սպառնալիքների հետ կապված մի շարք թաքնված խնդիրներ:

Ըստ Հայաստանի Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿՀ) տվյալների՝, ֆիքսված լայնաշերտ համացանցային (Broadband) կապի ներթափանցման մակարդակը կազմում է մոտ 17%, իսկ շարժական լայնաշերտ համացանցի ներթափանցումը՝ մոտ 96% (2021 թվականի տվյալներ): Հայաստանի տարածքի գրեթե 100%-ը ծածկված է բջջային ցանցով (բացառությամբ երկրի որոշ չքնակեցված՝ լեռնային հատվածների): Սա նշանակում է, որ շարժական համացանց կապը երկրում հաղորդակցության համար կենսական նշանակություն ունի, և որ հեռահաղորդակցության օպերատորները հսկայական դեր են խաղում իրենց օգտատերերի գաղտնիությունը պաշտպանելու գործում:

Սույն հետազոտության հիմքում «Թվային իրավունքների վարկանիշ» (Ranking Digital Rights, RDR) կազմակերպության մեթոդաբանությունն է՝ գնահատելու, թե ինչպես են Հայաստանի հեռահաղորդակցության երեք օպերատորները՝ «Վիվա-USU» (Viva-MTS), «Թիմ Տելեկոմ» (Team Telecom) և «Յուլթոմ» (Ucom) հավաքում, պահպանում, մշակում տվյալները, ինչպես նաև՝ տրամադրում դրանք երրորդ անձանց ու պետական մարմիններին:

Ըստ հետազոտության, նշված երեք ընկերություններն իրենց հաճախորդներին տրամադրում են տեղեկատվական նմանատիպ փաստաթղթեր՝ չհայտնելով, սակայն, բավարար մանրամասներ, թե իրենք ինչպես են օգտագործում և փոխանցում օգտատերերի տվյալները երրորդ անձանց կամ պետական կառույցներին:

Թեև բոլոր ընկերություններն իրենց ընդհանուր պայմաններում, գաղտնիության քաղաքականությունում և հարակից փաստաթղթերում հղում են կատարում Հայաստանի օրենսդրությանը, սակայն չեն մանրամասնում, թե իրենց ծառայություններին կամ հաճախորդների իրավունքներին վերաբերող ինչ օրենքներ կամ կարգավորումներ են կիրառվում:

Հետազոտությունն, այնուամենայնիվ, որոշակի տարբերություններ է մատնանշում, որոնք առկա են ընկերությունների մոտ՝ օգտատերերի տվյալները հավաքելիս, բայց տրամադրվող տեղեկությունները, ընդհանուր առմամբ, սահմանափակ են, և ընկերությունները չեն նշում տվյալներ հավաքելու իրենց սահմանները:

## Համացանցի արգելափակման պատմությունը

Հայաստանում համացանցային ռեսուրսները պաշտոնապես արգելափակված չեն: Գոյություն չունի օրենք, որը թույլ է տալիս որևէ տեսակի բովանդակության արգելափակում: Կան արգելափակման որոշ հնարավորություններ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ, բայց ոչ խաղաղ պայմաններում:

Մինևույն ժամանակ, եղել են դեպքեր, երբ կառավարությունն օգտագործել է իր իշխանությունը՝ որոշ համացանցային ռեսուրսներ արգելափակելու համար: Բոլոր այդ արգելափակումների ժամանակ պաշտոնական հայտարարություններ չեն եղել:

Հայաստանում համացանցն առաջին անգամ գրաքննվել է 2008թ. մարտի 1-ի արյունալի իրադարձություններից հետո, երբ Նախագահական ընտրություններին հաջորդեցին բախումները ոստիկանության, բանակի ու ընդդիմության միջև, ինչը հանգեցրեց 10 զոհի: Նախագահ Ռոբերտ Զոչարյանը՝ Հայաստանի խորհրդարանի հավանությամբ, Երևանում 20-օրյա արտակարգ դրություն հայտարարեց՝ արգելելով հետագա ցույցերը, գրաքննության ենթարկելով լրատվամիջոցները, արգելելով ՉԼՄ-ներով քաղաքական որևէ տեղեկության տարածումը՝ բացառությամբ պաշտոնական հաղորդագրությունների<sup>ii</sup>:

2008 թվականի մարտի 2-ին՝ ժամը 23:00-ի սահմաններում, համացանցի մատակարարները (Provider) (ըստ ոչ պաշտոնական աղբյուրների՝ հրամանը տրվել է Ազգային անվտանգության ծառայությունից<sup>iii</sup>) սկսեցին արգելափակել հայաստանցի օգտատերերի մուտքը հայաստանյան որոշ լրատվամիջոցների և ընդդիմադիր կազմակերպությունների կայքեր: Մի քանի օր արգելափակված էր նաև «ՅուԹյուբը» (YouTube): Արգելափակումը շարունակվեց մինչև արտակարգ դրության ավարտը՝ 2008 թվականի մարտի 21-ը:

2008 թվականից ի վեր՝ տարիներ շարունակ, Հայաստանում ոչ մի կայք արգելափակված չէր: Արգելափակման հաջորդ դեպքը տեղի է ունեցել 2016 թվականին: Հուլիսի 17-ին ոստիկանության պարեկապահակային ծառայության գնդի վրա հարձակման սկզբնական հատվածում համացանցի օգտատերերը հայտնեցին, որ համացանցի խոշոր մատակարարների, այդ թվում՝ «ԱրմենՏելի» (այժմ՝ «Թիմ Տելեկոմ») և «ՅուԼբոմի» միջոցով չեն կարողացել մուտք գործել «Ֆեյսբուք» (Facebook): ՉԼՄ-ների հաղորդմամբ՝ կապը վերականգնվել է մոտավորապես 40 րոպեի ընթացքում: «Ֆեյսբուքը» հաստատել է, որ ««Ֆեյսբուքի» արտադրանքների և ծառայությունների հասանելիության վրա ազդող խափանում» է տեղի ունեցել Հայաստանում, որը համընկել է բողոքի ցույցերի հետ: «Ֆեյսբուքի» այս արգելափակումն էր նաև պատճառներից մեկը, որ «Համացանցի ազատության» (Freedom on the Net) զեկույցում Հայաստանը հայտարարվեց մասամբ ազատ համացանց ունեցող երկիր (Նախկինում և դրանից հետո Հայաստանը հայտարարվել է ազատ համացանց ունեցող երկիր)<sup>iv</sup>:

Հաջորդ արգելափակումը 2020 թվականի աշնանն էր՝ դարաբաղյան պատերազմի ժամանակ: Պատերազմը սկսվել է սեպտեմբերի 27-ին: Չորս օր անց՝ 2020 թվականի հոկտեմբերի 1-ին, օգտատերերը խնդիրներ են ունեցել «ՏիկՏոկ» (TikTok) սոցիալական ցանցի հետ: «Արմենպրես» պետական լրատվական գործակալությունը հաղորդեց, որ «ՏիկՏոկն» անհասանելի է որոշ օգտատերերի համար: Օգտատերերը չէին կարողանում տեսանյութեր ներբեռնել հավելված կամ դիտել արդեն ներբեռնված տեսանյութերը: Սակայն արգելափակման մասին պաշտոնական տեղեկատվություն չկար<sup>v</sup>:

Կառավարությունը չհաստատեց իր միջամտությունը, սակայն հարթակի բեռնման և բովանդակության վերբեռնման հետ կապված խնդիրները պահպանվեցին մի քանի շաբաթ:

2020 թվականի հոկտեմբերի երկրորդ կեսից մինչև նոյեմբերի 10-ի հրադարարի հայտարարության ստորագրումը անհասանելի էին .az և .tr տիրույթներում գործող ադրբեջանական և թուրքական բազմաթիվ լրատվամիջոցներ, կառավարական ռեսուրսներ: Կայքեր մուտք գործելու հետ կապված խնդիրները պահպանվեցին ամիսներ շարունակ՝ հրադարարից հետո: Համացանցի մատակարարները կամ Հայաստանի կառավարությունը պաշտոնապես չեն ընդունել արգելափակման փաստը<sup>vi</sup>:

Համացանցի մատակարարները ձեռնամուխ եղան արգելափակմանը նույն սցենարով մոտ երկու տարի անց՝ 2022 թվականի սեպտեմբերին, երբ Ադրբեջանը վերստին հարձակվեց Հայաստանի վրա, և սահմանի երկայնքով տեղի ունեցան ծանր մարտեր<sup>vii</sup>: Ժամեր անց Հայաստանում «ՏիկՏոկը» կրկին արգելափակվեց, և հասանելիությունը վերականգնվեց միայն 10 օր անց: Այդուհանդերձ, ո՛չ կառավարությունը, ո՛չ էլ ծառայություններ մատուցողները չհաստատեցին՝ արդյո՞ք եղել է պաշտոնական հրահանգ՝ արգելափակել հարթակը:

## Տվյալների արտահոսքեր

Անձնական տվյալների արտահոսքի առումով Հայաստանը շարունակում է մնալ բարձր ռիսկայնությամբ երկիր: Հիմնական պատճառներից է Հայաստանի և Ադրբեջանի միջև տևական հակամարտությունն է, դարաբաղյան հիմնախնդիրը: Այս հակամարտությանը ներգրավված են նաև Ադրբեջանի (երբեմն նաև Թուրքիայի) բազմաթիվ «հայրենասիրական» և պետության կողմից հովանավորվող ցանցահենային (hacker) խմբեր, որոնք հարձակումներ են գործում հայաստանյան ենթակառուցվածքների, կայքերի ու սոցիալական ցանցերի օգտատերերի վրա:

Արդյունքում՝ ցանցահենները գողանում են մեծ ծավալի անձնական տվյալներ և շատ հաճախ տարածում համացանցում բոլորին հասանելի դրածներով այն: Օրինակ, 2020 թվականին գրանցվել է առնվազն երկու դեպք, երբ տվյալների արտահոսքը առնչվել է բջջային օպերատորներին<sup>viii</sup>:

- Հուլիսի 17-ին կոտրվեց երրորդ կողմ հանդիսացող՝ SMS տեքստային հաղորդագրություններ ուղարկող օպերատորի սերվերը, և բջջային կապի շուրջ 3 000 հայաստանցի բաժանորդներ ստացան SMS հաղորդագրություններ, որոնք իբր ուղարկվել էին Հայաստանի պաշտպանության նախարարությունից: Նույն օրը ադրբեջանցի ցանցահենները կոտրեցին հայկական 23 կայք, որոնց մեծ մասն անհասանելի էր մի քանի ժամ:
- Նոյեմբերի 9-ին ադրբեջանցի ցանցահենները հրապարակեցին «Ղարաբաղ Տելեկոմ» (Karabakh Telecom) հաճախորդների հեռախոսային տվյալների շտեմարանը՝ ավելի քան 58 000 արձանագրություններով, ներառյալ՝ Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանի, նրա վարչակազմի, պատգամավորների և ռազմական պաշտոնյաների հասցեներն ու հեռախոսահամարները: Տվյալների շտեմարանը ներառում էր նաև «Ղարաբաղ Տելեկոմի» ծառայություններից լայնորեն օգտվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների տվյալներ:

## Տվյալների մշակումը և ալգորիթմների կիրառումը

Թեև «Թվային իրավունքների վարկանիշի» ցուցիչները հիմնված չեն Հայաստանի օրենսդրության վրա և չեն դիտարկում, թե ինչպես են հայկական հեռահաղորդակցության ընկերությունները հետևում իրենց իրավական պարտավորություններին, դրանք, անշուշտ, օգտակար են՝ ընդհանուր պատկերացում կազմելու իրավական այն շրջանակի մասին, որի հիման վրա գործում են այդ ընկերությունները:

Ընդհանրապես, Հայաստանում անձնական տվյալների հավաքումը, մշակումը կարգավորվում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքով, որն ընդունվել է դեռ 2015 թվականին<sup>18</sup>: Օրենքը սահմանում է, որ անձնական տվյալների մշակումը պետք է ունենա օրինական նպատակ և օգտագործի անհրաժեշտ տվյալները նվազագույն քանակով: Այն նաև արգելում է այնպիսի անձնական տվյալների մշակումը, որոնք անհրաժեշտ չեն տվյալ նպատակին հասնելու համար: Անձնական տվյալները չպետք է պահվեն ավելի երկար, քան անհրաժեշտ է վերը նշված օրինական նպատակներին հասնելու համար:

Չկան հատուկ կանոնակարգեր՝ կապված ալգորիթմների կիրառման և համապատասխան տեխնիկական հատուկ մեթոդների հետ: Խնդրի հետ կապված հանրային քննարկումները բացակայում են:

2020 թվականին՝ Կովիդ-19-ի կարանտինային շրջանում, Հայաստանի կառավարությունը հայտարարեց արտակարգ դրություն, որին հաջորդեց Ազգային ժողովի կողմից կառավարությանը տրված թույլտվությունը՝ բջջային օպերատորներից ստացված տվյալների միջոցով հետևելու ֆիզիկական անձանց:

Բջջային օպերատորների բոլոր գանգերի, SMS հաղորդագրությունների մետատվյալների և գեոլոկացիոն տվյալների մշակման համար կառավարությունը ներդրեց հատուկ ծրագիր՝ մեքենայական ուսուցման (machine learning) և մեծ տվյալների (big data) վերլուծության կիրառմամբ<sup>19</sup>: Այդպես էլ անհայտ մնացած ընկերության (կառավարությունը չցանկացավ հրապարակել ծրագիրը ստեղծողի մասին տեղեկությունը) կողմից ստեղծված համակարգը հավաքում և վերլուծում էր բոլոր երեք բջջային օպերատորների մետատվյալները և գեոլոկացիոն տվյալները: Հավաքված տվյալներն օգտագործվում էին վարակված անձանց շփման շրջանակը որոշելու համար և այնուհետև պահվում էին Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակի (ԷԿԵՆԳ) սերվերում: ԱԱԾ-ն պարտավոր էր վերահսկել ծրագրի սպասարկումը և ապահովել դրա անվտանգությունը:

Ազգային ժողովի՝ 2020 թվականի ապրիլի 13-ի նիստի ժամանակ Պարետատան ղեկավար, փոխվարչապետ Տիգրան Ավինյանը պարզաբանեց, որ «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում կատարված փոփոխություններից հետո, որոնցով թույլատրվում էր մշտադիտարկել հեռախոսազանգերը, և սահմանափակում էր դրվում անձնական տվյալների պաշտպանության, գաղտնիության և հաղորդակցության ազատության վրա, համակարգը վերլուծել է 3029 անձի տվյալներ: Վերլուծության արդյունքում 7000 անձ ինքնամեկուսացել է: Փոխվարչապետ Ավինյանի խորհրդական Բագրատ Բադալյանը հայտարարեց, որ գանգերի բովանդակությունն ու տևողությունը հետաքրքրություն չեն ներկայացրել և չեն հավաքվել:



Համակարգը գործել է մինչև 2020 թվականի սեպտեմբերի վերջը: 2020 թվականի սեպտեմբերի 25-ին բոլոր հավաքված մետատվյալները ոչնչացվել են կառավարության, Ազգային ժողովի և բջջային երեք օպերատորների ներկայացուցիչների ներկայությամբ: Ֆիզիկապես ոչնչացվել են նաև բոլոր կոշտ սկավառակները, որոնց վրա պահվում էին տեղեկությունները:<sup>xi</sup>

Կառավարության կողմից տվյալների օգտագործման նկատմամբ հանրային վերահսկողություն չի եղել:

## Հայաստանի բջջային օպերատորները

Հայաստանում կա երեք բջջային օպերատոր՝ «Վիվա-ՄՏՄ», «Թիմ Տելեկոմ» և «Յուլբոմ»:

**«Վիվա-ՄՏՄ»-ը («ՄՏՄ Հայաստան» ՓԲԸ)** (գործունեության սկզբում՝ «ՎիվաՄեյ»), որը հայկական շուկայում բջջային օգտատերերի ամենամեծ մասնաբաժինն ունեցող ընկերությունն է, գործունեություն իրականացնելու արտոնություն է ստացել 2004 թվականին, գործարկվել 2005 թվականին: 2007 թվականի սեպտեմբերին բաժնետոմսերի 80%-ի վաճառքից հետո ընկերությունը դարձել է ռուսական «Մոբիլնիյե Տելեսիստեմի» («ՄՏՄ») ընկերության դուստր ձեռնարկությունը: 2008 թվականին իրականացված քոբրեյնդինգի արդյունքում փոխվեց ընկերության ապրանքանշանը. «ՎիվաՄեյ» դարձավ «ՎիվաՄեյ-ՄՏՄ»: 2009 թվականի ապրիլին «Վիվա-ՄՏՄ»-ն ազդարարեց իր երրորդ սերնդի (3G) ցանցի կոմերցիոն մեկնարկի մասին: Հայաստանում առաջին անգամ իրականացվեց 3G ցանցի գործարկում մարզերում: «Վիվա-ՄՏՄ»-ը առաջին անգամ Հայաստանում գործարկեց 4G/LTE ցանցը 2010 թվականին: 2019թ. օգոստոսին «ՄՏՄ» ՓԲԸ-ն ձեռք բերեց «Վիվա-ՄՏՄ»-ի բաժնետոմսերի մնացած 20 տոկոսը: «Վիվա-ՄՏՄ»-ն ունի սեփական օպտիկամանրաթելային մալուխների ցանց երկրի ողջ տարածքում, որը ձգվում է Հայաստանի հյուսիսից հարավ: Ընկերությունն համացանցը ներկրում է իր սեփական օպտիկամանրաթելային կապուղիներով՝ ներքին շուկայի կարիքների համար: Ներկայում ընկերությունն ունի մոտ 1200 աշխատակից և ավելի քան 2 միլիոն բաժանորդ: Ըստ վերջին տեղեկությունների, «Վիվա-ՄՏՄ»-ը վաճառքի է հանվել<sup>xii</sup>:

**«Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ն** որպես «ԱրմենՏել» հիմնադրվել է 1995 թվականի մարտին՝ ժառանգելով խորհրդային ժամանակաշրջանի հայաստանյան հեռահաղորդակցության ողջ համակարգը: 2006 թվականի նոյեմբերի 3-ին այն դարձավ ռուսաստանյան «ՎիմպելԿոմ» կորպորացիայի դուստր ձեռնարկությունը (հետագայում անվանվել է «ՎԵՈՆ») և սկսեց գործել «Բիլայն» (Beeline) ապրանքանշանի ներքո: 2017 թվականին ընկերությունը վերանվանվեց «ՎԵՈՆ Արմենիա»: 2020 թվականի հոկտեմբերի 29-ին «ԹԻՄ» ՍՊԸ-ն վարկային միջոցներով ձեռք բերեց ընկերության բաժնետոմսերի 100%-ը՝ ընկերությունը վերանվանելով «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ: Ներկայում «Տելեկոմ Արմենիա»-ն պատկանում է «ԹԻՄ» ՍՊԸ-ին, որը հիմնադրել են մեկ այլ հեռահաղորդակցական ընկերության նախկին թոփ-մենեջերներ Հայկ և Ալեքսանդր Եսայանները: 2022 թվականի մայիսից ընկերությունը գործում է «Թիմ Տելեկոմ» ապրանքանշանի ներքո:

**«Յուլբոմը»** հիմնադրվել է 2009 թվականին՝ որպես համացանց, ներառյալ՝ IPTV ծառայություններ մատուցող ընկերություն: 2013 թվականին ընկերությունը ստացել է հանրային շարժական համացանց ծառայությունների մատուցման արտոնագիր, իսկ 2015 թվականին ձեռք է բերել «Օրանժ Արմենիայի» (Orange S.A., հեռահաղորդակցային ընկերության հայաստանյան մասնաճյուղ) 100% բաժնետոմսերը՝ այդպիսով մուտք գործելով բջջային կապի հայաստանյան շուկա:

## Բջջային օպերատորների շուկայի մասնաբաժինները

2022 թվականի երրորդ եռամսյակի տվյալներով Հայաստանում կա բջջային կապի 3,921,230 բաժանորդ: Բաժանորդների քանակով առաջատար օպերատորը շարունակում է մնալ «Վիվա-USU»-ը: 2022 թվականի երրորդ եռամսյակի տվյալներով այդ օպերատորի բաժանորդների թիվը 2,306,396 է: Երկրորդ տեղում է «Թիմ Տելեկոմը» (նախկին «Բիլայն»): 2022 թվականի երրորդ եռամսյակի տվյալներով ընկերության բաժանորդների թիվը կազմել է 960,923: Երրորդ տեղում «Յուրոմոն» է: Նույն ժամանակահատվածի տվյալներով ընկերության բաժանորդների թիվը կազմել է 653,911<sup>xiii</sup>:

# Մեթոդաբանություն և հիմնական եզրահանգումներ

## Մեթոդաբանություն

Օգտվելով 2020 «Թվային իրավունքների վարկանիշ» կազմակերպության մեթոդաբանությունից<sup>xiv</sup>՝ սույն զեկույցը գնահատում է մարդու իրավունքների պաշտպանության վիճակը Հայաստանի բոլոր երեք բջջային օպերատորների՝ «Վիվա-ՄՏՄ»-ի, «Թիմ Տելեկոմի» և «Յուբոմի» ցանցերում: Մենք ուսումնասիրել ենք բջջային կապի կանխավճարային ծառայություններում առկա իրավիճակը: Բայց կարելի է փաստել, որ, ընդհանուր առմամբ, բջջային օպերատորների մյուս բոլոր ծառայությունների առումով իրավիճակը գրեթե նույնն է. ընկերությունները, հիմնականում տարբերակում չեն մտցնում տարբեր բջջային ծառայությունների կարգավորումների միջև:

«Թվային իրավունքների վարկանիշը» շահույթ չհետապնդող կազմակերպություն է: Գործունեության նպատակն է նպաստել համացանցում ազատ արտահայտմանը, միաժամանակ՝ գաղտնիության պահպանմանը: Կազմակերպությունը մշակել է չափանիշների համապարփակ փաթեթ, որն օգտագործվում է գնահատելու, թե որքանով է տվյալ ընկերությունը՝ իր գործունեության ընթացքում պահպանում մարդու իրավունքները և հանրությանը հասանելի դարձնում իր քաղաքականությունը: «Թվային իրավունքների վարկանիշի» չափանիշը ներառում է 58 ցուցիչ՝ երեք կատեգորիաների համար՝ կառավարում, խոսքի ազատություն, ինչպես նաև տեղեկատվության հասանելիություն և գաղտնիություն:

Հետազոտության մեջ օգտագործված են երկու խմբերի բաժանված քաներկու ցուցիչներ, մասնավորապես՝

## F. Խոսքի և տեղեկատվության ազատություն

- F1a. Ծառայության պայմանների մատչելիություն
- F2a. Ծառայության պայմանների փոփոխություններ
- F3a. Ծառայության պայմանների կատարման ապահովում
- F4a. Ծառայության պայմանների կատարումն ապահովելու նպատակով՝ բովանդակության սահմանափակումների վերաբերյալ տվյալներ
- F4b. Ծառայության պայմանների կատարումն ապահովելու նպատակով՝ հաշիվների սահմանափակումների վերաբերյալ տվյալներ
- F5a. Բովանդակություն կամ հաշիվներ սահմանափակելու՝ կառավարության պահանջներին արձագանքելու գործընթաց
- F5b. Բովանդակություն կամ հաշիվներ սահմանափակելու՝ մասնավոր պահանջներին արձագանքելու գործընթաց
- F6. Բովանդակություն կամ հաշիվներ սահմանափակելու կառավարության պահանջների վերաբերյալ տվյալներ
- F7. Բովանդակություն կամ հաշիվներ սահմանափակելու մասնավոր պահանջների վերաբերյալ տվյալներ
- F8. Ծանուցում օգտատիրոջը՝ բովանդակության և հաշվի սահմանափակման մասին
- F9. Ցանցերի կառավարում (հեռահաղորդակցության ընկերություններ)
- F10. Ցանցերի անջատում (հեռահաղորդակցության ընկերություններ)

## P. Գաղտնիություն

- P1(a). Գաղտնիության քաղաքականության մատչելիություն
- P3(a). Օգտատիրոջ վերաբերյալ տեղեկությունների հավաքում
- P4. Օգտատիրոջ վերաբերյալ տեղեկությունների փոխանցում
- P5. Օգտատիրոջ վերաբերյալ տեղեկություններ հավաքելու, մշակելու և փոխանցելու նպատակ
- P6. Օգտատիրոջ վերաբերյալ տեղեկությունների պահպանում
- P7. Օգտատերերի կողմից իրականացվող վերահսկողություն՝ իրենց վերաբերող տեղեկությունների նկատմամբ
- P8. Օգտատերերի համար՝ իրենց վերաբերյալ տեղեկությունների մատչելիություն
- P10a. Օգտատիրոջ վերաբերյալ տեղեկությունների նկատմամբ կառավարության պահանջներին արձագանքելու գործընթաց
- P10b. Օգտատիրոջ վերաբերյալ տեղեկությունների նկատմամբ մասնավոր պահանջներին արձագանքելու գործընթաց
- P15. Տվյալների արտահոսքեր

## Ցուցիչներ

Խոսքի և տեղեկատվության ազատության ցուցիչները նշվում են «F» տառով: Այս կատեգորիայի ցուցիչները փնտրում են ապացույցներ, որ ընկերությունը հարգանք է ցուցաբերում խոսքի և տեղեկատվության ազատության իրավունքի նկատմամբ, որն ամրագրված է «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում», «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում» և մարդու իրավունքներին վերաբերող միջազգային այլ փաստաթղթերում: Ընկերության թափանցիկ քաղաքականությունն ու գործելակերպը պետք է ցույց տան, թե ինչպես է ընկերությունը խուսափում այնպիսի գործողություններից, որոնք կարող են միջամտել այս իրավունքին, բացառությամբ այն դեպքերի, երբ նման գործողություններն օրինական են, համաչափ և նպատակով արդարացված:

Ըստ «Թվային իրավունքների վարկանիշի»՝ ընկերությունները, որոնք այս ցուցիչով լավ արդյունքներ են գրանցում, ցույց են տալիս, թե իրականում ինչպես են արձագանքում թափանցիկություն ապահովելու հանրային պահանջին կամ ինչպես են որոշում և կիրառում մասնավոր կանոններն ու կոմերցիոն պրակտիկան, որոնք ազդում են օգտատերերի խոսքի ազատության հիմնարար իրավունքի իրացման վրա:

Ստորև բերված են այս հաշվետվությունում<sup>xv</sup> օգտագործված «F» ցուցիչները՝

### *F1a. Ծառայության պայմանների մատչելիություն*

Պետք է ոյուրին լինի գտնել և հասկանալ ընկերության առաջարկած ծառայության պայմանների մասին տեղեկությունը:

### Տարրեր՝

1. Արդյո՞ք ոյուրին է գտնել ընկերության ծառայության պայմանները:
2. Արդյո՞ք ծառայության պայմանները հասանելի են հիմնական լեզվով (լեզուներով), որոնցով խոսում են ընկերության հաճախորդները:
3. Արդյո՞ք ծառայության պայմանները հասկանալի են ներկայացված:

*F2a. Ծառայության պայմանների փոփոխություններ*

Ընկերությունը պետք է հստակ ներկայացնի, որ ծառայության պայմաններում փոփոխություն կատարելիս ուղղակիորեն ծանուցում է օգտատերերին՝ նախքան այդ փոփոխությունների ուժի մեջ մտնելը:

Տարրեր՝

1. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, որ ուղղակիորեն ծանուցում է օգտատերերին՝ իր ծառայության պայմանների բոլոր փոփոխությունների մասին:
2. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, թե ինչպես է ծանուցելու օգտատերերին փոփոխությունների մասին:
3. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է այն ժամկետը, որի ընթացքում ծանուցում է օգտատերերին փոփոխությունների մասին, նախքան դրանց ուժի մեջ մտնելը:
4. Արդյո՞ք ընկերությունը վարում է հանրային արխիվ կամ փոփոխությունների մատյան:

*F3a. Ծառայության պայմանների կատարման ապահովում*

Ընկերությունը պետք է հստակ ներկայացնի այն հանգամանքները, որոնց դեպքում կարող է սահմանափակել բովանդակությունը կամ օգտատերերի հաշիվները:

Տարրեր՝

1. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, թե ինչ տեսակի բովանդակություն կամ գործունեություն չի թույլատրում:
2. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, թե որ դեպքերում կարող է սահմանափակել օգտատիրոջ հաշիվը:
3. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է այն գործընթացները, որոնք օգտագործում է՝ ընկերության կանոնները խախտող բովանդակությունը կամ հաշիվները հայտնաբերելու համար:
4. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, թե ինչպես է օգտագործում ալգորիթմների համակարգերը՝ նշելու այն բովանդակությունը, որը կարող է խախտել ընկերության կանոնները:
5. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, որ առաջնահերթության կարգով կատարում է որևէ պետական մարմնի դիմումի ուսումնասիրություն, երբ վերջինս նշում է, թե բովանդակությունը պետք է սահմանափակվի՝ ընկերության կանոնները խախտելու համար:
6. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, որ առաջնահերթության կարգով կատարում է որևէ մասնավոր կազմակերպության դիմումի ուսումնասիրություն, երբ վերջինս նշում է, թե բովանդակությունը պետք է սահմանափակվի՝ ընկերության կանոնները խախտելու համար:
7. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է այն գործընթացը, որով ապահովվում է կանոնների կատարումը, երբ հայտնաբերվում են խախտումներ:

*F4a. Ծառայության պայմանների կատարումն ապահովելու նպատակով՝ բովանդակության սահմանափակումների վերաբերյալ տվյալներ*

Ընկերությունը պետք է հստակ ներկայացնի և կանոնավոր կերպով հրապարակի տվյալներ՝ ընկերության կանոնները խախտող բովանդակությունը սահմանափակելու նպատակով ձեռնարկված գործողությունների ծավալի և բնույթի վերաբերյալ:

Տարրեր՝

1. Արդյո՞ք ընկերությունը հրապարակում է տվյալներ՝ իր կանոնները խախտելու համար սահմանափակված բովանդակության ընդհանուր քանակի վերաբերյալ:
2. Արդյո՞ք ընկերությունը հրապարակում է տվյալներ՝ սահմանափակված բովանդակության քանակի վերաբերյալ՝ նշելով, թե որ կանոնն է խախտվել:
3. Արդյո՞ք ընկերությունը հրապարակում է տվյալներ՝ իր սահմանափակված բովանդակության քանակի վերաբերյալ՝ ըստ բովանդակության ձևաչափի (օրինակ՝ տեքստ, նկար, տեսանյութ, ուղիղ հեռարձակմամբ տեսանյութ):
4. Արդյո՞ք ընկերությունը հրապարակում է տվյալներ՝ իր սահմանափակված բովանդակության քանակի վերաբերյալ՝ համաձայն խախտումը հայտնաբերելու համար օգտագործվող մեթոդի:
5. Արդյո՞ք ընկերությունը հրապարակում է այս տվյալները տարեկան առնվազն չորս անգամ:
6. Կարո՞ղ են տվյալները արտածվել որպես համակարգված տվյալների ֆայլ:

*F4b. Ծառայության պայմանների կատարումն ապահովելու նպատակով՝ հաշիվների սահմանափակումների վերաբերյալ տվյալներ*

Ընկերությունը պետք է հստակ ներկայացնի և կանոնավոր կերպով հրապարակի տվյալներ՝ իր կանոնները խախտող հաշիվները սահմանափակման գործողությունների ծավալի և բնույթի վերաբերյալ:

Տարրեր՝

1. Արդյո՞ք ընկերությունը հրապարակում է տվյալներ՝ ընկերության կանոնները խախտելու համար սահմանափակված հաշիվների ընդհանուր քանակի վերաբերյալ:
2. Արդյո՞ք ընկերությունը հրապարակում է տվյալներ՝ սահմանափակված հաշիվների քանակի վերաբերյալ՝ նշելով, թե որ կանոնն է խախտվել:
3. Արդյո՞ք ընկերությունը հրապարակում է տվյալներ՝ իր սահմանափակված հաշիվների քանակի վերաբերյալ՝ համաձայն խախտումը հայտնաբերելու համար օգտագործվող մեթոդի:
4. Արդյո՞ք ընկերությունը հրապարակում է այս տվյալները տարեկան առնվազն չորս անգամ:
5. Կարո՞ղ են տվյալները արտածվել որպես համակարգված տվյալների ֆայլ:

*F5a. Բովանդակություն կամ հաշիվներ սահմանափակելու՝ կառավարության պահանջներին արձագանքելու գործընթաց*

Ընկերությունը պետք է հստակ ներկայացնի, թե ինչպես է արձագանքում բովանդակությունը, հաշիվները հեռացնելու, զտելու կամ սահմանափակելու կառավարության պահանջներին (այդ թվում դատական որոշումներին):

Տարրեր՝

1. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է կառավարության՝ արտադատական պահանջներին արձագանքելու գործընթացը:
2. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է դատարանի որոշումներին արձագանքելու գործընթացը:
3. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է օտարերկրյա արդարադատության համար կառավարության պահանջներին արձագանքելու գործընթացը:
4. Արդյո՞ք ընկերության պարզաբանումները հստակ ներկայացնում են այն իրավական հիմքերը, որոնց միջոցով նա կարող է ենթարկվել կառավարության պահանջներին:
5. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, որ իրականացնում է կառավարության պահանջների պատշաճ ուսումնասիրություն՝ նախքան կորոշի, թե ինչպես արձագանքել:
6. Արդյո՞ք ընկերությունը հանձնառու է դիմակայել կառավարությունների կողմից ներկայացված ոչ պատշաճ կամ չափազանց լայն պահանջներին:
7. Արդյո՞ք ընկերությունը տրամադրում է հստակ ուղեցույց կամ օրինակներ, թե ինչպես է իրականացնում կառավարության պահանջներին արձագանքելու գործընթացը:

*F5b. Բովանդակություն կամ հաշիվներ սահմանափակելու՝ մասնավոր պահանջներին արձագանքելու գործընթաց*

Ընկերությունը պետք է հստակ ներկայացնի, թե ինչպես է արձագանքում բովանդակությունը կամ հաշիվները հեռացնելու, զտելու կամ սահմանափակելու պահանջներին, որոնք ստացվում են մասնավոր խողովակներով:

Տարրեր՝

1. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է բովանդակությունը կամ հաշիվները հեռացնելու, զտելու կամ սահմանափակելու՝ մասնավոր խողովակներով ստացված պահանջներին արձագանքելու իր գործընթացը:
2. Արդյո՞ք ընկերության պարզաբանումները հստակ ներկայացնում են այն հիմքերը, որոնցով ինքը կարող է կատարել մասնավոր խողովակներով ստացված պահանջները:
3. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, որ իրականացնում է մասնավոր խողովակներով ստացված պահանջների պատշաճ ուսումնասիրություն՝ նախքան կորոշի, թե ինչպես արձագանքել:
4. Արդյո՞ք ընկերությունը հանձնառու է դիմակայել մասնավոր խողովակներով ներկայացված ոչ պատշաճ կամ չափազանց լայն պահանջներին:



5. Արդյո՞ք ընկերությունը տրամադրում է հստակ ուղեցույց կամ օրինակներ, թե ինչպես է իրականացնում մասնավոր խողովակներով ներկայացված պահանջներին արձագանքելու գործընթացը:

*F6. Բովանդակություն կամ հաշիվներ սահմանափակելու՝ կառավարության պահանջների վերաբերյալ տվյալներ*

Ընկերությունը պետք է պարբերաբար հրապարակի տվյալներ՝ բովանդակությունը և հաշիվները հեռացնելու, զտելու կամ սահմանափակելու կառավարության պահանջների (ներառյալ դատական որոշումների) վերաբերյալ:

Տարրեր՝

1. Արդյո՞ք ընկերությունը դասակարգում է կառավարության կողմից ստացվող պահանջների քանակն ըստ երկրների:
2. Արդյո՞ք ընկերությունը ներկայացնում է ներգործության ենթարկված հաշիվների քանակը:
3. Արդյո՞ք ընկերությունը ներկայացնում է ներգործության ենթարկված բովանդակության կամ URL-ների քանակը:
4. Արդյո՞ք ընկերությունը ներկայացնում է կառավարությունից ստացված պահանջների առարկաներն՝ ըստ տեսակների:
5. Արդյո՞ք ընկերությունը ներկայացնում է կառավարության՝ տարբեր իրավական մարմիններից ստացվող պահանջների քանակը:
6. Արդյո՞ք ընկերությունը ներկայացնում է բովանդակությունը կամ հաշիվները ոչ պաշտոնական գործընթացների միջոցով սահմանափակելու կառավարության այն պահանջների քանակը, որոնք ստանում է պետական պաշտոնյաներից:
7. Արդյո՞ք ընկերությունը ներկայացնում է կառավարության պահանջների թիվը, որ բավարարել է:
8. Արդյո՞ք ընկերությունը հրապարակում է կառավարության սկզբնական պահանջները կամ ներկայացնում է, որ պատճեններ է տրամադրում երրորդ անձ հանդիսացող հանրային արխիվի:
9. Արդյո՞ք ընկերությունը ներկայացնում է այս տվյալները առնվազն տարին մեկ անգամ:

*F7. Բովանդակություն կամ հաշիվներ սահմանափակելու՝ մասնավոր պահանջների վերաբերյալ տվյալներ*

Ընկերությունը պետք է պարբերաբար հրապարակի տվյալներ՝ մասնավոր խողովակներով ստացվող և բովանդակություն կամ հաշիվներ հեռացնելու, զտելու կամ մուտքը սահմանափակելու պահանջների վերաբերյալ:

Տարրեր՝

1. Արդյո՞ք ընկերությունը դասակարգում է բովանդակություն կամ հաշիվներ սահմանափակելու՝ մասնավոր խողովակներով ստացվող պահանջների քանակը:
2. Արդյո՞ք ընկերությունը ներկայացնում է ներգործության ենթարկված հաշիվների քանակը:

3. Արդյո՞ք ընկերությունը ներկայացնում է ներգործության ենթարկված բովանդակության կամ URL-ների քանակը:
4. Արդյո՞ք ընկերությունը ներկայացնում է բովանդակության հեռացման պատճառները:
5. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է պահանջներ ներկայացրած մասնավոր խողովակները:
6. Արդյո՞ք ընկերությունը ներկայացնում է պահանջների թիվը, որ բավարարել է:
7. Արդյո՞ք ընկերությունը հրապարակում է սկզբնական պահանջները կամ բացահայտում է, որ պատճեններ է տրամադրում երրորդ անձ հանդիսացող հանրային արխիվի:
8. Արդյո՞ք ընկերությունը ներկայացնում է այս տվյալները առնվազն տարին մեկ անգամ:
9. Արդյո՞ք տվյալները հնարավոր է արտածել որպես համակարգված տվյալների ֆայլ:
10. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, որ իր հաշվետվությունը ներառում է մասնավոր խողովակներով ստացվող բոլոր տեսակի պահանջները:

*F8. Ծանուցում օգտատիրոջը՝ բովանդակության և հաշվի սահմանափակման մասին*

Ընկերությունը պետք է հստակ ներկայացնի, որ բովանդակությունը կամ հաշիվները սահմանափակելիս՝ ծանուցում է օգտատերերին:

**Տարրեր՝**

1. Կիրառելի չէ:
2. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, որ ծանուցում է այն օգտատերերին, որոնք փորձում են մուտք գործել սահմանափակված բովանդակություն:
3. Արդյո՞ք ընկերությունն իր ծանուցման մեջ հստակ ներկայացնում է բովանդակության սահմանափակման պատճառը (իրավական կամ այլ):
4. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, որ ծանուցում է օգտատերերին, երբ սահմանափակում է նրանց հաշիվները:

*F9. Ցանցերի կառավարում (հեռահաղորդակցության ընկերություններ)*

Ընկերությունը պետք է հստակ ներկայացնի, որ առաջնահերթություն չի տալիս, չի արգելափակում կամ միտումնավոր դանդաղեցնում տրաֆիկի, հավելվածների, արձանագրությունների կամ բովանդակության որոշակի տեսակներ՝ որևէ պատճառով, քան ծառայության որակն ու ցանցի հուսալիությունը երաշխավորելն է:

**Տարրեր՝**

1. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, որ հանձնառու է իր քաղաքականությանը առաջնահերթություն չտալու, չարգելափակելու կամ միտումնավոր դանդաղեցնելու տրաֆիկի, հավելվածների, արձանագրությունների կամ բովանդակության որոշակի տեսակներ՝ որևէ պատճառով, քան ծառայության որակն ու ցանցի հուսալիությունը երաշխավորելն է:

2. Արդյո՞ք ընկերությունը կիրառում է այնպիսի պրակտիկա, ինչպիսին համացանցային փաթեթի մեզաբայթերը չօգտագործող ծրագրեր (այսինքն՝ համացանցային անսահմանափակ տրաֆիկի հնարավորություն ունեցող ծրագրեր. zero-rating programs) առաջարկելն է, որոնք առաջնահերթություն են տալիս ցանցային տրաֆիկին՝ որևէ պատճառով, քան ծառայության որակն ու ցանցի հուսալիությունը երաշխավորելն է:
3. Եթե ընկերությունը կիրառում է ցանցերին առաջնահերթություն տալու պրակտիկան՝ որևէ պատճառով, քան ծառայության որակն ու ցանցի հուսալիությունը երաշխավորելն է, արդյո՞ք հստակ ներկայացում է դրա նպատակը:

*F10. Ցանցերի անջատում (հեռահաղորդակցության ընկերություններ)*

Ընկերությունը պետք է հստակ ներկայացնի այն հանգամանքները, որոնց պարագայում կարող է փակել կամ սահմանափակել մուտքը դեպի ցանց կամ ցանցի որոշակի արձանագրություններ, ծառայություններ կամ հավելվածներ:

Տարրեր՝

1. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է այն պատճառ(ներ)ը, որոնց հիման վրա կարող է անջատել ծառայությունը՝ որոշակի տարածքի կամ օգտատերերի խմբի համար:
2. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, թե ինչու կարող է սահմանափակել մուտքը կոնկրետ հավելվածներ կամ արձանագրություններ (օրինակ՝ VoIP, հաղորդագրություններ)՝ որոշակի տարածքում կամ օգտատերերի որոշակի խմբի համար:
3. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է կառավարության՝ ցանցը անջատելու կամ ծառայության մուտքը սահմանափակելու պահանջներին արձագանքելու գործընթացը:
4. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է իր հանձնառությունը՝ դիմակայելու կառավարության՝ ցանցը անջատելու կամ ծառայության մուտքը սահմանափակելու պահանջներին:
5. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, որ ցանցը անջատելիս կամ ծառայության մուտքը սահմանափակելիս՝ ուղղակիորեն ծանուցում է օգտատերերին:
6. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է ցանցի անջատման մասին ստացված պահանջների քանակը:
7. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է այն իրավաբանական մարմին, որը ներկայացնում է պահանջները:
8. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է կառավարության պահանջների քանակը, որոնք բավարարել է:

Գաղտնիության ցուցիչները սկսվում են «P» տառով: Այս կատեգորիայի ցուցիչները փնտրում են ապացույցներ, որ իր հրապարակած քաղաքականությունում և կիրառած պրակտիկայում ընկերությունը նշում է կոնկրետ միջոցներ, որոնք կոչված են ապահովելու օգտատերերի գաղտնիության իրավունքը: Այն իրավունքը, որն ամրագրված է «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում», «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրում» և մարդու իրավունքների պաշտպանության այլ միջազգային փաստաթղթերում:

Քաղաքականությունը պետք է պարունակի օգտատերերի թվային անվտանգությունը պաշտպանելու հանձնառություն:

Ըստ «Թվային իրավունքների վարկանիշի»՝ ընկերությունները, որոնք այս ցուցիչով լավ արդյունքներ են գրացնում, ցույց են տալիս, թե իրականում ինչպես են արձագանքում թափանցիկություն ասպահովելու հանրային պահանջին կամ ինչպես են որոշում և կիրառում մասնավոր կանոններն ու կոմերցիոն պրակտիկան, որոնք ազդում են օգտատերերի խոսքի ազատության հիմնարար իրավունքի իրացման վրա:

Ստորև բերված են այս հաշվետվության մեջ օգտագործված գաղտնիության ցուցիչները՝

#### *P1(a). Գաղտնիության քաղաքականության մատչելիություն*

Պետք է ոլորին լինի գտնել և հասկանալ ընկերության առաջարկած գաղտնիության քաղաքականությունը:

Տարրեր՝

1. Արդյո՞ք ոլորին է գտնել ընկերության գաղտնիության քաղաքականության մասին տեղեկությունը:
2. Արդյո՞ք գաղտնիության քաղաքականությունը հասանելի է հիմնական լեզվով (լեզուներով), որոնցով խոսում են ընկերության հաճախորդները:
3. Արդյո՞ք քաղաքականությունը հասկանալի է ներկայացված:
4. (Շարժական Էկոհամակարգերի համար). արդյո՞ք ընկերությունը ներկայացնում է, որ իր հավելվածների խանութի միջոցով՝ առկա հավելվածներից պահանջում է օգտատերերին տրամադրել գաղտնիության քաղաքականություն:
5. (Անձնական թվային օգնականի Էկոհամակարգերի համար). արդյո՞ք ընկերությունը բացահայտում է, որ իր հմտությունների խանութի (skill store) միջոցով հասանելի դարձած հմտություններից պահանջում է օգտատերերին տրամադրել գաղտնիության քաղաքականություն:

#### *P3(a). Օգտատիրոջ վերաբերյալ տեղեկությունների հավաքում*

Ընկերությունը պետք է հստակ ներկայացնի, թե օգտատիրոջ վերաբերյալ ինչ տեղեկություններ է հավաքում և ինչպես է այդ անում:

Տարրեր՝

1. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, թե օգտատիրոջ վերաբերյալ ինչ տեսակի տեղեկություններ է հավաքում:
2. Օգտատիրոջ վերաբերյալ ընկերության հավաքած տեղեկությունների յուրաքանչյուր տեսակի համար՝ ընկերությունը հստակ ներկայացնում է, թե ինչպես է հավաքում այդ տվյալները:
3. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, որ սահմանափակում է օգտատերերի վերաբերյալ տեղեկությունների հավաքումը՝ թույլատրելով հավաքել միայն այն տեղեկությունները, որոնք ուղղակիորեն առնչվում և անհրաժեշտ են իր ծառայության նպատակներին հասնելու համար:

*P4. Օգտատիրոջ վերաբերյալ տեղեկությունների փոխանցում*

Ընկերությունը պետք է հստակ ներկայացնի, թե օգտատերերին վերաբերող ինչ տվյալներ է փոխանցում և ում:

Տարրեր՝

1. Արդյո՞ք օգտատիրոջ վերաբերյալ հավաքվող տեղեկությունների յուրաքանչյուր տեսակի համար ընկերությունը հստակ հայտնում է, որ փոխանցում է այդ տվյալները:
2. Օգտատիրոջ վերաբերյալ ընկերության կողմից փոխանցվող տեղեկությունների յուրաքանչյուր տեսակի համար՝ արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է երրորդ անձանց տեսակները, որոնց նա փոխանցում է այդ տվյալները:
3. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, որ կարող է օգտատերերի վերաբերյալ տեղեկությունները փոխանցել կառավարությանը (կառավարություններին) կամ իրավապահ մարմիններին:
4. Օգտատերերի վերաբերյալ ընկերության կողմից փոխանցվող տեղեկությունների յուրաքանչյուր տեսակի համար՝ արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է բոլոր երրորդ անձանց անունները, որոնց փոխանցում է այդ տվյալները:

*P5. Օգտատիրոջ վերաբերյալ տեղեկություններ հավաքելու, մշակելու և փոխանցելու նպատակ*

Ընկերությունը պետք է հստակ ներկայացնի, թե ինչու է հավաքում, մշակում և փոխանցում օգտատերերի վերաբերյալ տեղեկությունները:

Տարրեր՝

1. Օգտատերերի վերաբերյալ ընկերության կողմից հավաքված տեղեկությունների յուրաքանչյուր տեսակի համար՝ արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է հավաքման նպատակը:
2. Օգտատերերի վերաբերյալ ընկերության կողմից մշակված տեղեկությունների յուրաքանչյուր տեսակի համար՝ արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է մշակման նպատակը:
3. Ընկերությունը հստակ ներկայացնո՞ւմ է, թե արդյոք համադրում է օգտատերերի վերաբերյալ՝ ընկերության տարբեր ծառայությունների կողմից հավաքվող տեղեկությունները, և եթե այո, ապա ինչո՞ւ:
4. Արդյո՞ք օգտատերերի վերաբերյալ ընկերության կողմից փոխանցած տեղեկությունների յուրաքանչյուր տեսակի համար՝ ընկերությունը հստակ ներկայացնում է փոխանցելու նպատակը:
5. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, որ սահմանափակում է օգտատերերի վերաբերյալ իր հավաքած տեղեկությունների օգտագործումը՝ նշելով, որ դրանք օգտագործվում են միայն այն նպատակներով, որոնց համար հավաքվել կամ վերլուծության են ենթարկվել:

*P6. Օգտատիրոջ վերաբերյալ տեղեկությունների պահպանում*

Ընկերությունը պետք է հստակ ներկայացնի, թե որքան ժամանակ է պահպանում օգտատերերի վերաբերյալ տեղեկությունները:

Տարրեր՝

1. Արդյո՞ք ընկերությունը օգտատերերի վերաբերյալ հավաքվող տեղեկությունների յուրաքանչյուր տեսակի համար՝ հստակ ներկայացնում է, թե որքան ժամանակ է պահպանում այդ տվյալները:
2. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, թե օգտատերերի վերաբերյալ ինչ չնույնականացված (de-identified) տեղեկություններ է պահպանում:
3. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է օգտատերերի վերաբերյալ տեղեկության չնույնականացման գործընթացը:
4. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, որ ջնջում է օգտատերերի վերաբերյալ ողջ տեղեկությունը, այն բանից հետո, երբ օգտատերերը փակում են իրենց հաշիվները:
5. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է այն ժամկետը, որի ընթացքում ջնջելու է օգտատերերի վերաբերյալ տեղեկությունները, այն բանից հետո, երբ նրանք փակեն իրենց հաշիվները:

*P7. Օգտատերերի կողմից իրականացվող վերահսկողություն՝ իրենց վերաբերող տեղեկությունների նկատմամբ*

Ընկերությունը պետք է հստակ ներկայացնի օգտատերերին, թե ինչ տարբերակներ նրանք ունեն՝ ընկերության կողմից իրենց վերաբերող տեղեկությունների հավաքումը, մշակումը, պահպանումը և օգտագործումը վերահսկելու համար:

Տարրեր՝

1. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, որ օգտատերերը կարող են վերահսկել իրենց վերաբերյալ ընկերության կողմից հավաքվող տեղեկությունների՝ յուրաքանչյուր տեսակի հավաքման գործընթացը:
2. Արդյո՞ք ընկերությունը օգտատերերի վերաբերյալ հավաքվող տեղեկությունների յուրաքանչյուր տեսակի համար հստակ ներկայացնում է, որ օգտատերերը կարող են ջնջել այդ տեղեկությունները:
3. Օգտատերերի վերաբերյալ տեղեկությունների յուրաքանչյուր տեսակի համար ընկերությունը կատարում է համապատասխան մշակումներ. այդ պարագայում ընկերությունը հստակ ներկայացնում է, որ օգտատերերը կարող են վերահսկել ընկերության կողմից օգտատիրոջ վերաբերյալ այդ տվյալների մշակման գործընթացը:
4. Օգտատերերի վերաբերյալ տեղեկությունների յուրաքանչյուր տեսակի համար ընկերությունը կատարում է համապատասխան մշակումներ. այդ պարագայում ընկերությունը հստակ ներկայացնում է, որ օգտատերերը կարող են ջնջել այդ տվյալները:
5. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, որ օգտատերերին տրամադրում է տարբերակներ՝ վերահսկելու, թե ինչպես են իրենց վերաբերյալ տեղեկություններն օգտագործվում թիրախային գովազդի համար:
6. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, որ թիրախային գովազդը լռելյայն անջատված է:

7. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, որ տրամադրում է օգտատերերին տարբերակներ՝ վերահսկելու, թե ինչպես են իրենց վերաբերող տեղեկությունները օգտագործվում ալգորիթմային համակարգերի մշակման համար:
8. Ընկերությունը հստակ ներկայացնում է, թե արդյոք լռելյայն է օգտագործում է օգտատերերի վերաբերյալ տեղեկությունները՝ ալգորիթմային համակարգեր մշակելու համար, թե՞ ոչ:

*P8. Օգտատերերի համար իրենց վերաբերյալ տեղեկությունների մատչելիություն*

Ընկերությունները պետք է օգտատերերին թույլ տան ստանալ իրենց վերաբերյալ ողջ տեղեկությունը, որին տիրապետում է ընկերությունը:

Տարրեր՝

1. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, որ օգտատերերը կարող են ստանալ իրենց վերաբերող տեղեկությունների պատճենը:
2. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, թե իրենց վերաբերյալ ինչ տեղեկություն կարող են ստանալ օգտատերերը:
3. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, որ օգտատերերը կարող են ստանալ իրենց վերաբերող տեղեկությունները՝ համակարգված տվյալների ձևաչափով:
4. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, որ օգտատերերը կարող են ստանալ իրենց վերաբերյալ ընկերության ունեցած ողջ հանրամատչելի և մասնավոր տեղեկությունը:
5. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, որ օգտատերերը կարող են մուտք գործել գովազդային լսարանի կատեգորիաների ցանկ, որտեղ ընկերությունը ներառել է իրենց:
6. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, որ օգտատերերը կարող են ստանալ ողջ տեղեկությունը, որն ընկերությունը մշակել է իրենց մասին:

*P10a. Օգտատիրոջ վերաբերյալ տեղեկությունների նկատմամբ կառավարության պահանջներին արձագանքելու գործընթաց*

Ընկերությունը պետք է հստակ ներկայացնի, թե ինչպես է արձագանքում օգտատերերին առնչվող տեղեկությունների վերաբերյալ կառավարության պահանջներին:

Տարրեր՝

1. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է կառավարության՝ արտադատական պահանջներին արձագանքելու իր գործընթացը:
2. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է դատարանի որոշումներին արձագանքելու իր գործընթացը:
3. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է օտարերկրյա արդարադատության համար՝ կառավարության պահանջներին արձագանքելու գործընթացը:
4. Արդյո՞ք ընկերության պարզաբանումները հստակ ներկայացնում են այն իրավական հիմքերը, որոնցով նա կարող է կատարել կառավարության պահանջները:

5. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, որ իրականացնում է կառավարության պահանջների պատշաճ ուսումնասիրություն՝ նախքան որոշելը, թե ինչպես արձագանքել:
6. Արդյո՞ք ընկերությունը հանձնառու է դիմակայել կառավարությունների կողմից ներկայացված ոչ պատշաճ կամ չափազանց լայն պահանջներին:
7. Արդյո՞ք ընկերությունը տրամադրում է հստակ ուղեցույց կամ օրինակներ, թե ինչպես է իրականացնում կառավարության պահանջներին արձագանքելու գործընթացը:

*P10b. Օգտատիրոջ վերաբերյալ տեղեկությունների նկատմամբ մասնավոր պահանջներին արձագանքելու գործընթաց*

Ընկերությունը պետք է հստակ ներկայացնի, թե ինչպես է արձագանքում օգտատերերին առնչվող տեղեկությունների վերաբերյալ մասնավոր խողովակներով ստացվող պահանջներին:

**Տարրեր՝**

1. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է մասնավոր խողովակներով ներկայացվող պահանջներին արձագանքելու իր գործընթացը:
2. Արդյո՞ք ընկերության պարզաբանումները հստակ ներկայացնում են այն իրավական հիմքերը, որոնցով նա կարող է կատարել մասնավոր խողովակներով ներկայացվող պահանջները:
3. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, որ իրականացնում է մասնավոր խողովակներով ներկայացվող պահանջների պատշաճ ուսումնասիրություն՝ նախքան որոշելը, թե ինչպես արձագանքել:
4. Արդյո՞ք ընկերությունը հանձնառու է դիմակայել մասնավոր խողովակներով ներկայացվող ոչ պատշաճ կամ չափազանց լայն պահանջներին:
5. Արդյո՞ք ընկերությունը տրամադրում է հստակ ուղեցույց կամ օրինակներ, թե ինչպես է իրականացնում մասնավոր խողովակներով ներկայացվող պահանջներին արձագանքելու գործընթացը:

*P15. Տվյալների արտահոսքեր*

Ընկերությունը պետք է հրապարակայնորեն ներկայացնի, թե ինչպես է արձագանքում տվյալների արտահոսքերին:

**Տարրեր՝**

1. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, որ տվյալների արտահոսքի դեպքում՝ առանց անհարկի ուշացման տեղեկացնելու է համապատասխան մարմիններին:
2. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է այն օգտատերերին ծանուցելու իր գործընթացը, որոնք կարող են տուժել տվյալների արտահոսքից:
3. Արդյո՞ք ընկերությունը հստակ ներկայացնում է, թե ինչ քայլեր է ձեռնարկելու օգտատերերի վրա տվյալների արտահոսքի ազդեցության հարցը լուծելու համար:



## Գնահատում և միավորների նշանակում

«Թվային իրավունքների վարկանիշի» բոլոր կատեգորիաներով ընկերությունները ստանում են կուտակային միավոր: Արդյունքները ցույց են տալիս ընկերությունների աշխատանքը՝ ըստ յուրաքանչյուր կատեգորիայի և ցուցիչի: «Թվային իրավունքների վարկանիշը» գնահատում է հիմնական՝ «մայր» ընկերության կամ «խմբի», ինչպես նաև ընտրված ծառայությունների և/կամ գործող տեղական ընկերությունների՝ տեղեկությունների ինստիտուցիոնալ ներկայացումը՝ կախված ընկերության կառուցվածքից:

Յուրաքանչյուր ցուցիչ բաղկացած է տարրերի ցանկից, և ընկերությունները ստանում են միավորներ (ամբողջական, մասնակի կամ ոչ մի միավոր) յուրաքանչյուր իրականացրած տարրի համար: Գնահատումն ընգրկում է յուրաքանչյուր ցուցիչի յուրաքանչյուր տարրի բացահայտում՝ հիմնվելով հետևյալ հնարավոր պատասխաններից մեկի վրա՝

- «Այո»/ամբողջական ներկայացում. ընկերության կողմից տեղեկությունների ներկայացումը համապատասխանում է տարրի պահանջին:
- «Մասնակի». ընկերության կողմից տեղեկությունների ներկայացումը համապատասխանում է տարրի որոշ, բայց ոչ բոլոր գործոններին, կամ ներկայացումը բավականաչափ համապարփակ չէ՝ տարրի ամբողջական շրջանակը բավարարելու համար:
- «Չի արձանագրվել տեղեկությունների ներկայացում». հետազոտողները չեն կարողացել ընկերության կայքում գտնել համապատասխան տեղեկությունը, որը պատասխանում է տարրի հարցին:
- «Ոչ». ընկերության կողմից տեղեկությունների ներկայացումն առկա է, բայց այն օգտատերերին մատնացույց չի անում տարրում նշված կետը: Սա տարբերվում է «Չի արձանագրվել տեղեկությունների ներկայացում» տարբերակից, թեև երկուսի դեպքում էլ միավոր չի տրվում:
- «Կիրառելի չէ». այս տարրը չի տարածվում ընկերության կամ ծառայության վրա, և «Կիրառելի չէ» անվանումով պիտակավորված տարրերը դրական կամ բացասական ազդեցություն չեն ունենա ընկերության գնահատականը հաշվարկելիս:

### Միավորներ

- Այո/ամբողջական բացահայտում = 100
- Մասնակի = 50
- Ոչ = 0
- Չի արձանագրվել տեղեկությունների ներկայացում = 0
- Կիրառելի չէ = ներառված չէ միավորներում և միջին գնահատականներում:

### Հիմնական եզրահանգումներ

Հետազոտությունը բազմաթիվ կարևոր եզրահանգումների է հանգել:

Առաջին կարևոր փաստն այն է, որ Հայաստանի բոլոր երեք բջջային օպերատորների կողմից իրենց հաճախորդներին տեղեկացնելու ձևը նույնն է: Նրանց ընդհանուր

պայմանների և տվյալների պաշտպանության ռազմավարությունների միջև էական տարբերություն չկա: Սա խոսում է հնարավոր ընդհանուր մոտեցման մասին:

Օպերատորների, երրորդ անձ հանդիսացող ընկերությունների և պետական գերատեսչությունների կողմից օգտատերերի տվյալների օգտագործման վերաբերյալ տեղեկությունները սահմանափակ են: Օպերատորները հիմնականում ներկայացնում են, թե օգտագործում են անձնական տվյալները տեխնիկական և իրավական նպատակներով, և փոխանցում են որոշ տվյալներ երրորդ անձանց, սակայն չեն տրամադրում տվյալների նմանատիպ օգտագործման մանրամասները:

Օպերատորները հակված են խուսափել՝ մանրամասն տեղեկություններ տրամադրելուց, և փոխարենը հղում են կատարում Հայաստանի օրենսդրությանը՝ առանց հստակության ու մանրամասների:

Տվյալների պաշտպանության հարցերում օպերատորները չեն տարբերակում կանխավճարային և հետվճարային բջջային ծառայությունները:

## Խոսքի և տեղեկատվության ազատություն

Բացակայում են ընկերությունների հաշվետվությունները՝ բովանդակությունը կամ հաշիվները հեռացնելու, գտելու կամ սահմանափակելու կառավարության պահանջների (ներառյալ դատական որոշումներով) վերաբերյալ: Չկան տեղեկություններ՝ բովանդակությունը կամ հաշիվները հեռացնելու, գտելու կամ սահմանափակելու կառավարության կամ մասնավոր հարցումներին արձագանքելու գործընթացի վերաբերյալ:

Բոլոր երեք ընկերություններն օգտատերերի իրավունքների վերաբերյալ և դրանց հարակից բոլոր տեղեկությունները ընդգրկում են երկու մեծ փաստաթղթերում՝ ընդհանուր պայմաններ և տվյալների պաշտպանության քաղաքականություն:

«Վիվա-USU»-ի դեպքում դրանք են՝

- Շարժական էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման ընդհանուր պայմաններ,<sup>xvi</sup>
- Գաղտնիության քաղաքականություն<sup>xvii</sup>:

«Թիմ Տելեկոմ»՝

- Էլեկտրոնային հաղորդակցության և այլ ծառայությունների մատուցման ընդհանուր դրույթներ և պայմաններ<sup>xviii</sup>,
- Գաղտնիության քաղաքականություն<sup>xix</sup>:

«Յուրբոմ»՝

- Էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման ընդհանուր դրույթներ և պայմաններ<sup>xx</sup>,
- Անձնական տվյալների մշակման քաղաքականություն/անձնական տվյալների մշակման մասին ծանուցում<sup>xxi</sup>:

Բոլոր փաստաթղթերը ներկայացված են ընկերությունների կայքերում՝ տեսանելի տեղերում, հաճախորդը մկնիկի մեկ-երկու հպումով կարող է ստանալ տեղեկությունը: Բոլոր ֆայլերը ներկայացված են երեք լեզուներով՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն, ինչը բավարարում է հաճախորդների լեզվական կարիքները:

Բոլոր օպերատորները պատշաճ կերպով տեղեկացնում են օգտատերերին ծառայության պայմանների փոփոխությունների մասին, ինչը ներառված է ընդհանուր պայմանների փաստաթղթերում:

«Վիվա-USU»-ում փոփոխության մասին ծանուցումը հրապարակվելուց երեք օր առաջ է. «Օպերատորը կարող է սեփական հայեցողությամբ կատարել հրապարակային առաջարկ (օֆերտա) Պայմանագի պայմանները, այդ թվում՝ կիրառվող սպասարկման պլանները, սակագները և կանոնները փոփոխելու մասին՝ այդ փոփոխություններն առնվազն 3 (երեք) օր առաջ Օպերատորի պաշտոնական վեբ-կայքում հրապարակելու և/կամ սպասարկման կենտրոններում հայտարարելու միջոցով, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում այդ մասին Հայաստանի Հանրապետությունում լայն տարածում ունեցող առնվազն մեկ զանգվածային լրատվության միջոցում հրապարակային հայտարարություն տեղադրելու միջոցով»<sup>xxii</sup>:

«Թիմ Տելեկոմում» նույնը կատարվում է 10 օր առաջ. «Օպերատորն իրավունք ունի ցանկացած ժամանակ Բաժանորդային Պայմանագրում, այդ թվում՝ սույն Պայմաններում, կատարել (միակողմանիորեն) փոփոխություններ և լրացումներ, որոնք

բջջային կապի ծառայությունների համար ուժի մեջ մտնելուց 10 (տասը) օր առաջ հրապարակվում են Օպերատորի Վեբ-կայքում (որոնց կարելի է ծանոթանալ նաև զանգահարելով Չանգերի կենտրոն կամ այցելելով Վաճառքի և սպասարկման կենտրոններ)»<sup>xxiii</sup>:

«Յուրքումում»՝ 7 օր. ««Յուրքում» իրավունք ունի ցանկացած ժամանակ Բաժանորդային Պայմանագրում, այդ թվում՝ սույն Պայմաններում, կատարելու (միակողմանիորեն) փոփոխություններ և լրացումներ, որոնք ուժի մեջ մտնելուց 7 (յոթ) օր առաջ հրապարակվում են «Յուրքումի» Վեբ-կայքում (որոնց կարելի է ծանոթանալ նաև զանգահարելով Չանգերի սպասարկման կենտրոն կամ այցելելով Վաճառքի և սպասարկման կենտրոններ), բացառությամբ Ծառայություն(-ներ)ում ներառված հեռուստաալիքների կազմի փոփոխության և/կամ «Յուրքումի» կողմից հեռարձակվող (վերահեռարձակվող) հեռուստաալիքների հեռուստահաղորդումների բովանդակության փոփոխության կամ դադարեցման դեպքերի, որոնք ուժի մեջ են մտնում Վեբ-կայքում հրապարակելուց 3 (երեք) օր հետո»:<sup>xxiv</sup>

Բայց երեք ընկերություններն էլ չեն վարում հանրային արխիվ կամ ծառայությունների մատուցման պայմանների փոփոխության մատյան:

Բովանդակության կամ օգտատերերի սահմանափակման մասին տեղեկություններ չկան: Ընկերությունները չեն հրապարակում սահմանափակվող բովանդակության որակին և քանակին կամ արգելափակված օգտատերերին վերաբերող որևէ տվյալ:

F3(a), F4(a), F4(b), F5(a), F5(b), F6, F7, F8, F10 ցուցիչներին առնչվող ողջ տեղեկությունը բոլոր երեք բջջային օպերատորների կողմից չի ներկայացվում:

F9 ցուցիչի վերաբերյալ տեղեկությունները նույնպես հիմնականում չեն ներկայացվում: Ընկերությունները չեն նշում ցանցի չեզոքության մասին կամ որ առաջնահերթություն չեն տալիս, չեն արգելափակում կամ միտումնավոր դանդաղեցնում տրաֆիկի, հավելվածների, արձանագրությունների կամ բովանդակության որոշակի տեսակներ՝ որևէ պատճառով, քան ծառայության որակն ու ցանցի հուսալիությունը երաշխավորելն է:

Բոլոր երեք ընկերություններն ունեն մի քանի սակագներ՝ պահանջված հավելվածների (սոցիալական մեդիա, սթրիմինգային ծառայություններ և մեսենջերներ) մասով անսահմանափակ համացանցի հնարավորությամբ<sup>xxv</sup>:

## Գաղտնիություն

Երեք ընկերություններն էլ անձնական տվյալների վերաբերյալ տեղեկությունները գետնադրում են մեկ՝ տվյալների պաշտպանության քաղաքականության փաստաթղթում:

«Վիվա-ՄՏՍ»-ի դեպքում՝

- Գաղտնիության քաղաքականություն փաստաթուղթն է<sup>xxvi</sup>:

«Թիմ Տելեկոմի» դեպքում՝

- Գաղտնիության քաղաքականությունը<sup>xxvii</sup>:

«Յուրոմի» դեպքում՝

- Անձնական տվյալների մշակման քաղաքականություն/անձնական տվյալների մշակման մասին ծանուցումը<sup>xxviii</sup>:

Բոլոր փաստաթղթերը ներկայացված են ընկերությունների կայքերում՝ տեսանելի տեղերում, հաճախորդը մկնիկի մեկ-երկու հպումով կարող է ստանալ տեղեկությունը: Բոլոր ֆայլերը ներկայացված են երեք լեզուներով՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն, ինչը բավարարում է հաճախորդների լեզվական կարիքները:

Օգտատերերի տվյալների հավաքման առումով (ցուցանիշ P3a) ընկերությունների միջև կա որոշակի տարբերություն: «Վիվա-ՄՏՍ»-ը հնարավորություն է տալիս տեղեկություն գտնել բաժանորդներից հավաքված տվյալների վերաբերյալ. «Օպերատորը սույն քաղաքականությամբ սահմանված կարգով և նպատակներով հավաքում է ֆիզիկական անձանց անձնական տվյալները, որոնք թույլ են տալիս կամ կարող են թույլ տալ ուղղակիորեն կամ անուղղակիորեն նույնականացնել նրա ինքնությունը, այդ թվում՝

- անուն, ազգանուն,
- անձնագրի տվյալներ,
- ծննդյան ամսաթիվ,
- կոնտակտային տվյալներ (հասցե, էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար և այլն)»<sup>xxix</sup>:

Չի հայտնաբերվել որևէ նշում առ այն, թե ինչպես է ընկերությունը հավաքում օգտատիրոջ վերաբերյալ տեղեկությունները կամ թե որն է հավաքվող տեղեկության սահմանը:

«Թիմ Տելեկոմում» առկա է տեղեկություն միայն օգտատիրոջից հավաքվող տվյալների մասին՝ տվյալ անձի և/կամ, առկայության դեպքում, վերջինիս ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի (անձնագիր, նույնականացման քարտ, զինվորական գրքույկ, սպայական գրքույկ կամ Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված այլ՝ անձը հաստատող փաստաթուղթ) տվյալները, նկար, անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան վայր և ամսաթիվ, հաշվառման և/կամ փաստացի բնակության վայրի հասցե, հեռախոսահամար, էլեկտրոնային հասցե: Առկա է նաև տեղեկություն երրորդ կողմ հանդիսացող անձանց վերաբերյալ<sup>xxx</sup>:

Տվյալների հավաքման հետ կապված՝ «Թիմ Տելեկոմը» նշում է. «Երկրորդական աղբյուրների միջոցով ստացման ենթակա անձնական տվյալներն են՝

- անձը հաստատող փաստաթղթի տվյալներ՝ սերիա, համար, տրման ամսաթիվ, տրամադրող մարմնի տվյալները, վավերականության ժամկետ, կարգավիճակ (գործող, անվավեր),
- անուն, ազգանուն, հայրանուն, նկար,
- ծննդյան ամսաթիվ,
- հաշվառման հասցե,
- հանրային ծառայությունների համարանիշը (ՅՃՅ),
- հարկադիր կատարման ծառայությունում տվյալ անձին վերաբերող տվյալներ՝ կատարողական վարույթի առկայություն, արգելանքի առկայություն, ամսաթիվ, արգելադրված գույքի չափը, պարտավորության չափը,
- ֆինանսական կազմակերպություններում պարտավորության առկայության մասին տեղեկություն, պարտավորության չափը:

Երկրորդական աղբյուրներ են համարվում մասնավորապես՝ պետական տեղեկատվական համակարգի օպերատորը և վարկային պատմություն հավաքագրելու կամ վարկունակության գնահատում իրականացնելու համար լիազորված երրորդ անձինք (օր.՝ վարկային բյուրո)»<sup>xxxii</sup>:

Տեղեկատվության հավաքման սահմանների վերաբերյալ նշվում է հետևյալը. «Ձեր անձնական տվյալները մշակվելու են սույն Ծանուցմամբ սահմանված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ նվազագույն քանակով, ուստի երկրորդական աղբյուրներից չեն ստացվելու Ձեր կողմից արդեն իսկ տրամադրված անձնական տվյալները»<sup>xxxiii</sup>:

«Յուրքում» կա միայն օգտատիրոջից հավաքվող տվյալների մասին տեղեկություն՝

- անձը հաստատող փաստաթղթի (անձնագիր, նույնականացման քարտ, զինվորական գրքույկ, սպայական գրքույկ կամ Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված այլ՝ անձը հաստատող փաստաթուղթ) տվյալները, անուն, ազգանուն (հայրանուն), ծննդյան վայր և ամսաթիվ, հաշվառման և/կամ փաստացի բնակության հասցե,
- հեռախոսահամար, էլեկտրոնային հասցե:

Երրորդ անձ հանդիսացող աղբյուրներից տեղեկությունը նույնպես նշված է<sup>xxxiii</sup>:

Տեղեկության հավաքման առնչությամբ «Յուրքում» նշում է հետևյալը. ««Յուրքում» իրավասու է դիմել երկրորդական աղբյուրներին, մասնավորապես՝ պետական տեղեկատվական համակարգի օպերատորին և վարկային պատմություն հավաքագրելու կամ վարկունակության գնահատում իրականացնելու համար լիազորված երրորդ անձանց (օրինակ՝ վարկային բյուրո)՝ Ձեր անձնական տվյալները պարունակող տվյալների բազաներից անձնական տվյալների ստացման համար»<sup>xxxiv</sup>:

Տեղեկությունների հավաքման սահմանների հետ կապված «Յուրքում» նշում է. «Քանի որ մենք Ձեր անձնական տվյալները մշակելու ենք այն նվազագույն քանակով, որն անհրաժեշտ է IV բաժնով սահմանված նպատակներին հասնելու համար, այն անձնական տվյալները, որոնք ստացվում են Ձեզնից, երկրորդական աղբյուրներից չեն ստացվելու»<sup>xxxv</sup>:

Երեք ընկերություններն էլ չեն տրամադրում որևէ տեղեկություն՝ տեխնիկական տվյալների (օրինակ՝ IMEI, IP հասցեներ, այցելած կայքեր և այլն) և երրորդ անձ հանդիսացող աղբյուրներից ստացված տվյալների վերաբերյալ:

Ինչ վերաբերում է օգտատերերի մասին տեղեկության փոխանցմանը (P4 ցուցիչ), «Վիվա-USU»-ը, կրկին, շատ քիչ տեղեկություն է տրամադրում ընդհանրացված հղումներ կատարելով օրենսդրությանը. «Օպերատորը կարող է Բաժանորդների անձնական տվյալները փոխանցել երրորդ անձանց (սաև Հայաստանից դուրս) և դրանց հետ վարվել ըստ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերի և դեպքերի»<sup>xxxvi</sup>: Կառավարությանը տեղեկությունների փոխանցման վերաբերյալ տրամադրվում է միայն շատ ընդհանրացված տեղեկություն. «Գործել կարգավորող մարմինների, կառավարության, դատարանների և իրավապահ մարմինների պահանջներին կամ հարցումներին համապատասխան»<sup>xxxvii</sup>:

«Թիմ Տելեկոմը» ներկայացնում է ընդհանուր տեղեկություններ՝ հավանական երրորդ անձանց վերաբերյալ. «Մենք կարող ենք տրամադրել Ձեր անձնական տվյալները (փոխանակվել անձնական տվյալներով) սույն Ծանուցմամբ սահմանված նպատակներով և միայն այդ նպատակներն արդարացնող ծավալով՝

- պետական տեղեկատվական համակարգի օպերատորին,
- ծառայությունների մատուցման մեջ ներգրավված կամ Ընկերության գործունեությանը վերաբերող ուսումնասիրություն անցկացնող գործընկերներին, մատակարարներին և ծառայություն մատուցողներին,
- երրորդ անձանց, որոնք իրականացնում են անձնական տվյալների մշակում, պահպանում և տեղեկատվության տրամադրում պարտապանների պարտավորությունների կատարման վերաբերյալ,
- երրորդ անձանց, որոնք Ընկերությունից ստացել են Բաժանորդի/հաճախորդի պարտավորությունը պահանջելու կամ դատական կարգով բռնագանձելու իրավունքը,
- Ընկերության բաժնետերերին, դուստր և կախյալ ընկերություններին, ներկայացուցչություններին, մասնաճյուղերին,
- Ընկերության գործակալներին, դիլերներին, դիստրիբյուտորներին կամ այլ ծառայություն մատուցողներին, որոնք իրականացնում են Ընկերության ապրանքների կամ Ծառայությունների վաճառք կամ նմանատիպ այլ գործունեություն,
- երրորդ անձանց, որոնք կարող են անձնական տվյալները (մասնավորապես հեռախոսահամար, էլեկտրոնային հասցե) օգտագործել մարքեթինգային նպատակով (որը կարող է արտահայտվել գովազդային բնույթի կարճ SMS հաղորդագրությունների/զանգերի ստացման, սոցիալական հարցումների, համացանցում, սոցիալական ցանցերում գովազդի ցուցադրման ձևով և այլն): Սույնով բաժանորդը համաձայնվում է, որ Ընկերությունը պատասխանատվություն չի կրում սույն կետում նշված հաղորդագրությունների իրավական հետևանքների համար,
- երրորդ անձանց, որոնք լիազորված են հավաքագրելու վարկային պատմություն կամ իրականացնելու վարկունակության կամ վճարունակության գնահատում,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված պետական մարմիններին»<sup>xxxviii</sup>:

«Թիմ Տելեկոմը» նույնպես շատ հակիրճ է անդրադառնում պետական մարմիններին տեղեկություն փոխանցելուն՝ միայն նշելով, որ պետական մարմինները կարող են տեղեկություն ստանալ օրենքով սահմանված կարգով<sup>xxxix</sup>:

«Յուրքումը» տրամադրում է տվյալներ երրորդ անձանց մասին. «Սույն Ծանուցման IV բաժնում սահմանված նպատակներով, միայն այդ նպատակներն արդարացնող ծավալով և միայն դրա անհրաժեշտության դեպքում մենք կարող ենք տրամադրել Ձեր անձնական տվյալները (փոխանակվել անձնական տվյալներով)՝

- պետական տեղեկատվական համակարգի օպերատորին Ձեր կողմից տրամադրված տվյալների հիման վրա Ձեր մասին սույն Ծանուցմամբ սահմանված այլ տվյալներ ստանալու համար,
- երրորդ անձանց, որոնք իրականացնում են անձնական տվյալների մշակում, պահպանում և տեղեկատվության տրամադրում պարտապանների կողմից իրենց պարտավորությունների կատարման վերաբերյալ,
- երրորդ անձանց, որոնք «Յուրոմից» ստացել են մատուցված Ծառայությունների դիմաց Բաժանորդի կողմից կուտակված պարտքը պահանջելու կամ դատական կարգով բռնագանձելու իրավունքը,
- Ծառայությունների մատուցման մեջ ներգրավված կամ «Յուրոմի» գործունեությանը վերաբերող ուսումնասիրություն անցկացնող «Յուրոմի» գործընկերներին, մատակարարներին և ծառայություն մատուցողներին,
- «Յուրոմի» գործակալներին, դիլերներին, դիստրիբյուտորներին, ֆրենչայզներին կամ այլ ծառայություն մատուցողներին, որոնք իրականացնում են «Յուրոմի» ապրանքների կամ Ծառայությունների վաճառք կամ նմանատիպ այլ գործունեություն,
- երրորդ անձանց, որոնք լիազորված են հավաքագրելու վարկային պատմություն կամ իրականացնելու վարկունակության գնահատում,
- «Յուրոմի» բաժնետերերին, ներկայացուցչություններին, մասնաճյուղերին, դուստր և կախյալ ընկերություններին,
- ՀՀ պետական մարմիններին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով»<sup>xi</sup>:

Պետական մարմինների վերաբերյալ պարզապես հղում է արվում օրենսդրությանը՝ «ՀՀ պետական մարմիններին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով»<sup>xii</sup>:

Օգտատիրոջ մասին տեղեկությունների պահպանման հետ կապված (P6 ցուցիչ)՝ «Վիվա-USU»-ը պարզապես հայտնում է, որ «Օպերատորը պահպանում է անձնական տվյալները՝

- այնքան ժամանակ, քանի դեռ անհրաժեշտ է Բաժանորդներին տրամադրել իրենց կողմից պահանջված ծառայություններից օգտվելու հնարավորություն,
- երբ Բաժանորդը հարցով կամ պահանջով դիմել է Օպերատորին. այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է Օպերատորին Բաժանորդի հարցին կամ պահանջին արձագանքելու համար,
- Բաժանորդի անձնական տվյալները պարունակող փաստաթղթերի պահպանման (արխիվացման ժամանակահատված) ընթացքում,
- ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված ցանկացած այլ ժամանակահատվածով»<sup>xiii</sup>:

«Թիմ Տելեկոմը» հայտնում է հետևյալը. «Մենք պարբերաբար վերանայում ենք անձնական տվյալների պահպանման ժամկետները՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության պահանջների և Ընկերության որդեգրած քաղաքականության: Ձեր անձնական տվյալները կպահպանվեն Ընկերության ընթացակարգերով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված տևողությամբ»<sup>xiii</sup>: Իսկ տվյալների ոչնչացման վերաբերյալ տեղեկանում ենք, որ ««Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ն մշակում է միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահպանման ենթակա անձնական տվյալները և սույն Ծանուցմամբ սահմանված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ անձնական տվյալները՝ առավելագույնս խուսափելով դրանց կրկնակի մշակումից: Այլ անձնական տվյալները ենթակա են ոչնչացման»<sup>xiv</sup>:

«Յուրոմը», ինչպես մյուս օպերատորները, նույնպես տրամադրում է շատ ընդհանուր տեղեկություններ՝ հղում կատարելով օրենսդրությանը. «Մենք պարբերաբար



վերանայում ենք անձնական տվյալների պահպանման ժամկետները՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության պահանջների և Ընկերության որդեգրած քաղաքականության: Ձեր անձնական տվյալները կպահպանվեն մեր համակարգերում Յուբրմի ընթացակարգերով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված տևողությամբ»<sup>xiv</sup>:

«Վիվա-USU»-ը տրամադրում է տեղեկություններ, թե բաժանորդներն ինչ իրավունքներ ունեն իրենց մասին հավաքված տվյալների նկատմամբ. «Սույն Քաղաքականությամբ սահմանված կարգով և նպատակներով Բաժանորդն իրավունք ունի՝

- պահանջել մուտք Օպերատորի մոտ պահող իր անձնական տվյալներին,
- պահանջել իր անձնական տվյալների ուղղումը և/կամ ջնջումը,
- պահանջել իր անձնական տվյալների մշակման սահմանափակում կամ առարկել այդ մշակմանը,
- չեղարկել իր անձնական տվյալների մշակման համաձայնությունը (եթե Օպերատորը Բաժանորդի անձնական տվյալները մշակում է վերջինիս համաձայնության հիման վրա),
- տվյալների պաշտպանության տեղական իրավասու մարմինն բողոք ներկայացնել, եթե իր գաղտնիության իրավունքները խախտվել են, կամ եթե նա տուժել է անձնական տվյալների անօրինական մշակման արդյունքում»<sup>xv</sup>:

«Թիմ Տելեկոմը» ավելի քիչ տեղեկություն է տրամադրում՝ հղում կատարելով օրենսդրությանը. «Դուք ունեք «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավունքներ: Դուք իրավունք ունեք հետ կանչել անձնական տվյալները մշակելու մասին Ձեր համաձայնությունը կամ պահանջել ջնջել Ձեր անձնական տվյալները: Սակայն այդ պարագայում, ցավոք, մենք չենք կարող շարունակել Ձեզ մատուցել Ծառայություններ: Բացի այդ, նշենք, որ անձնական տվյալների ջնջումը իրավական պահանջների, այլ պարտականությունների և գործոնների պատճառով միշտ չէ, որ հնարավոր է»<sup>xvi</sup>:

«Յուբրմի» տրամադրած տեղեկությունը շատ ընդհանրական է. «Դուք ունեք ՀՀ Անձնական տվյալների պաշտպանության մասին օրենքով սահմանված իրավունքներ: Դուք իրավունք ունեք ետ կանչել անձնական տվյալները մշակելու մասին Ձեր համաձայնությունը: Սակայն, այդ դեպքում, մենք չենք կարող շարունակել մատուցել Ձեզ Ծառայություններ»<sup>xviii</sup>:

Ընկերությունները մատչելի կերպով չեն ներկայացնում տեղեկություններ այն մասին, թե օգտատերերը ինչպես կարող են մուտք ունենալ իրենց մասին տեղեկություններին (P8 ցուցիչ), ինչպես են ընկերություններն արձագանքում պետական (P10a ցուցիչ), մասնավոր (P10b ցուցիչ) հարցումներին: Չկա տեղեկություն այն մասին, թե ինչպես են ընկերությունները վարվում տվյալների հնարավոր արտահոսքերի պարագայում (P15 ցուցիչ):

Մենք որևէ տեղեկություն չունենք ընկերությունների կողմից ալգորիթմային համակարգերի օգտագործման մասին:

## Ամփոփում

Ընդհանուր առմամբ, օպերատորները հակված են ոչ հստակ ներկայացնել իրենց ծառայության պայմանները և գաղտնիության քաղաքականությունը՝ առանց մանրամասների:

Ընկերություններն իրենց հաճախորդներին պետք է ավելի մանրամասն տեղեկություններ տրամադրեն՝ ծառայության պայմանների և գաղտնիության քաղաքականության մասին: Նրանք պետք է թափանցիկ ներկայացնեն, թե ինչպես են հավաքում և օգտագործում անձնական տվյալները և ում են դրանք փոխանցում:

Օպերատորները հաճախ հղում են անում Հայաստանի օրենսդրությանը՝ կոնկրետ տեղեկություններ տրամադրելուց խուսափելու համար: Ընկերությունները պետք է կոնկրետ տեղեկություններ տրամադրեն տվյալների պաշտպանության իրենց ռազմավարությունների մասին և սույլ հղում չկատարեն Հայաստանի օրենսդրությանը:

Մյուս կողմից, օրենսդրությունը նույնպես զուրկ է հստակությունից, երբ հարցն առնչվում է անձնական տվյալներին և կառավարության կողմից մասնավոր ընկերություններին արվող հարցումներին:

Հայաստանի օրենսդրությունը պետք է վերանայվի և թարմացվի, որը կպահանջի մասնավոր ընկերություններից ունենալ հստակ ուղեցույցներ՝ բոլոր այն կետերի մասով, որոնք վերաբերում են անձնական տվյալների պաշտպանությանն ու կառավարության կողմից արվող հարցումներին: Սա կօգնի փակել այն «բացերը», որոնք կարող են հանգեցնել անձնական տվյալների չարաշահմանն ու մարդու իրավունքների ոտնահարմանը:


Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը պետք է ավելի ակտիվ լինի՝ տվյալների պաշտպանության քաղաքականության և կանոնակարգերի մշտադիտարկման և կիրառումն ապահովելու հարցում ու հատկապես՝ հեռահաղորդակցության ոլորտում: Սա կարող նպաստել, որպեսզի օպերատորները գործեն օրենքների ու կանոնակարգերի համաձայն և պաշտպանեն սպառողների գաղտնիության իրավունքները:

Հարկ է իրականացնել կրթական ծրագրեր՝ բարձրացնելու հանրային իրազեկվածությունը տվյալների պաշտպանության, գաղտնիության իրավունքների և անձնական տվյալների առցանց փոխանցման ռիսկերի վերաբերյալ: Սա կօգնի սպառողներին իրազեկ որոշումներ կայացնել՝ իրենց անձնական տեղեկություններն օպերատորներին փոխանցելիս, ինչպես նաև ակտիվ լինել՝ իրենց տվյալների պաշտպանության և փոխանցման պրակտիկայի ու թափանցիկության վերաբերյալ տեղեկություն պահանջելու ժամանակ:


# Հավելված

## Ցուցիչներ. Թվային իրավունքների վարկանիշ


### TEAM LLC




### Viva-MTS



### Ucom



**Հիմնական ցուցիչների համեմատություն.  
Թվային իրավունքների վարկանիշ**



<sup>i</sup> ՀԾԿՀ-ն Հայաստանում կարգավորում է էներգետիկայի բնագավառը (ներառում է էլեկտրաէներգետիկական, ջերմամատակարարման, գազամատակարարման համակարգերը), ջրային ոլորտը, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառը, փոստային կապի բնագավառը, երկաթուղային տրանսպորտի բնագավառը, տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման բնագավառը, <https://psrc.am/> :

<sup>ii</sup> Մարտի 1-ի իրադարձություններ, [https://en.wikipedia.org/wiki/2008\\_Armenian\\_presidential\\_election\\_protests](https://en.wikipedia.org/wiki/2008_Armenian_presidential_election_protests) :

<sup>iii</sup> Հայաստանի անվտանգային, հետախուզական գլխավոր կառույցը՝ ընդգրկուն պարտականություններով և կարողություններով, [https://en.wikipedia.org/wiki/National\\_Security\\_Service\\_\(Armenia\)](https://en.wikipedia.org/wiki/National_Security_Service_(Armenia)) :

<sup>iv</sup> Հայաստան. «Ազատությունը համացանցում – 2017» զեկույց, <https://freedomhouse.org/country/armenia/freedom-net/2017> :

<sup>v</sup> Հայաստանում չի գործում TikTok-ը, 2020թ. հոկտեմբերի 1, <https://armenpress.am/arm/news/1029718.html> :

<sup>vi</sup> «Ինտերնետի ազատության հիմնական խնդիրները Հայաստանում», Media.am, 2021թ. հունվարի 18, <https://media.am/hy/critique/2021/01/18/25891/> :

<sup>vii</sup> Freedom House-ը դատապարտում է Հայաստանի վրա ադրբեջանական հարձակումը և դիվանագիտական ուղիներ փնտրելու կոչ անում, <https://freedomhouse.org/article/freedom-house-condemns-azerbaijani-attacks-armenia-calls-diplomacy> :

<sup>viii</sup> «Կոտրված» Է. կիբերմարտադաշտը նույնքան կարևոր է, 2021թ. հունվարի 27, <https://evnreport.com/magazine-issues/the-cyber-battlefield-is-just-as-important-armenia-s-cybersecurity/> :

<sup>ix</sup> Անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենք, <http://www.foi.am/hy/legislation/> :

<sup>x</sup> Կորունավիրուսի տարածումը Հայաստանում այսուհետ կհսկեն նաև հեռախոսների միջոցով, 2020թ. ապրիլի 17, <https://www.azatutyun.am/a/30540411.html> :

- <sup>xi</sup> Տվյալների կենտրոնում և հատուկ համակարգչային ծրագրում մշակված բոլոր տվյալների ոչնչացման գործընթացի վերաբերյալ արձանագրություն,  
[https://www.gov.am/u\\_files/file/Haytararutyunner/Ardzanagrutyun.pdf](https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/Ardzanagrutyun.pdf) :
- <sup>xii</sup> Էքսկլյուզիվ. Հայաստանի խոշորագույն բջջային օպերատորը վաճառվում է, 2022թ. հոկտեմբերի 10,  
<https://www.civilnet.am/en/news/678515/exclusive-armenias-biggest-mobile-phone-operator-up-for-sale/> :
- <sup>xiii</sup> B24.am (2022). Բջջային բաժանորդների թիվը Հայաստանում. 2022թ. III եռամսյակ. Բիզնես 24 - Տնտեսական, Ֆինանսական և Բիզնես Լրատվություն, <https://b24.am/business/340934.html> :
- <sup>xiv</sup> «Թվային իրավունքների վարկանիշի» մեթոդաբանության մանրամասները հասանելի են այստեղ՝  
<https://rankingdigitalrights.org/2020-indicators/> :
- <sup>xv</sup> «Թվային իրավունքների վարկանիշի» մեթոդաբանության մանրամասները հասանելի են այստեղ՝  
<https://rankingdigitalrights.org/2020-indicators/> :
- <sup>xvi</sup> Շարժական և Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման ընդհանուր պայմաններ, <https://www.mts.am/more/Legal-Information/General-Terms-of-Provisioning-Mobile-Electronic-Communication-Services> :
- <sup>xvii</sup> Գաղտնիության քաղաքականություն, <https://www.mts.am/more/Legal-Information/Privacy-Policy> :
- <sup>xviii</sup> Էլեկտրոնային հաղորդակցության և այլ ծառայությունների մատուցման ընդհանուր դրույթներ և պայմաններ,  
[https://www.telecomarmenia.am/file\\_manager/terms\\_and\\_conditions/terms\\_and\\_conditions\\_0.pdf](https://www.telecomarmenia.am/file_manager/terms_and_conditions/terms_and_conditions_0.pdf) :
- <sup>xix</sup> Գաղտնիության քաղաքականություն, <https://www.telecomarmenia.am/hy/privacy-policy> :
- <sup>xx</sup> Էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման ընդհանուր դրույթներ և պայմաններ,  
[https://www.ucom.am/file\\_manager/gtc/2022/31.10.2022/GTC\\_final%20verson\\_ARM\\_31.10.2022.pdf](https://www.ucom.am/file_manager/gtc/2022/31.10.2022/GTC_final%20verson_ARM_31.10.2022.pdf) :
- <sup>xxi</sup> Անձնական տվյալների մշակման քաղաքականություն/անձնական տվյալների մշակման մասին ծանուցում, [https://www.ucom.am/file\\_manager/poa/20190603\\_UCOM\\_privacy%20policy\\_ARM.pdf](https://www.ucom.am/file_manager/poa/20190603_UCOM_privacy%20policy_ARM.pdf) :
- <sup>xxii</sup> Շարժական և Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման ընդհանուր պայմաններ, 14.8 կետ, <https://www.mts.am/more/Legal-Information/General-Terms-of-Provisioning-Mobile-Electronic-Communication-Services> :
- <sup>xxiii</sup> Էլեկտրոնային հաղորդակցության և այլ ծառայությունների մատուցման ընդհանուր դրույթներ և պայմաններ, 18.5 կետ,  
[https://www.telecomarmenia.am/file\\_manager/terms\\_and\\_conditions/terms\\_and\\_conditions\\_0.pdf](https://www.telecomarmenia.am/file_manager/terms_and_conditions/terms_and_conditions_0.pdf) :
- <sup>xxiv</sup> Անձնական տվյալների մշակման քաղաքականություն/անձնական տվյալների մշակման մասին ծանուցում, 17.7 կետ,  
[https://www.ucom.am/file\\_manager/poa/20190603\\_UCOM\\_privacy%20policy\\_ARM.pdf](https://www.ucom.am/file_manager/poa/20190603_UCOM_privacy%20policy_ARM.pdf) :
- <sup>xxv</sup> Սակագնային պլաններ, որոնք ներառում են տարբեր անվճար ծառայություններ. «Թիմ Տելեկոմ»՝  
<https://www.telecomarmenia.am/hy/mobile-tariffs>, «Յուլքոմ»՝ <https://www.ucom.am/hy/personal/personal-mobile-services/voice-prepaid/prepaid-levelup>, «Վիվա-ՄՍՍ»՝ <https://www.mts.am/Individual-customers/mobile-connection/Tariffs-and-discounts/x-y-z-tariff-plans/for-prepaid> :
- <sup>xxvi</sup> Գաղտնիության քաղաքականություն, <https://www.mts.am/more/Legal-Information/Privacy-Policy> :
- <sup>xxvii</sup> Գաղտնիության քաղաքականություն, <https://www.telecomarmenia.am/hy/privacy-policy> :
- <sup>xxviii</sup> Անձնական տվյալների մշակման քաղաքականություն/անձնական տվյալների մշակման մասին ծանուցում, [https://www.ucom.am/file\\_manager/poa/20190603\\_UCOM\\_privacy%20policy\\_ARM.pdf](https://www.ucom.am/file_manager/poa/20190603_UCOM_privacy%20policy_ARM.pdf) :
- <sup>xxix</sup> Գաղտնիության քաղաքականություն, բաժին A, <https://www.mts.am/more/Legal-Information/Privacy-Policy> :
- <sup>xxx</sup> Գաղտնիության քաղաքականություն, բաժին 4, <https://www.telecomarmenia.am/hy/privacy-policy> :
- <sup>xxxi</sup> Գաղտնիության քաղաքականություն, բաժին 4, <https://www.telecomarmenia.am/hy/privacy-policy> :
- <sup>xxxii</sup> Գաղտնիության քաղաքականություն, բաժին 4, <https://www.telecomarmenia.am/hy/privacy-policy> :
- <sup>xxxiii</sup> Անձնական տվյալների մշակման քաղաքականություն/անձնական տվյալների մշակման մասին ծանուցում, III բաժին,  
[https://www.ucom.am/file\\_manager/poa/20190603\\_UCOM\\_privacy%20policy\\_ARM.pdf](https://www.ucom.am/file_manager/poa/20190603_UCOM_privacy%20policy_ARM.pdf) :
- <sup>xxxiv</sup> Անձնական տվյալների մշակման քաղաքականություն/անձնական տվյալների մշակման մասին ծանուցում, III բաժին,  
[https://www.ucom.am/file\\_manager/poa/20190603\\_UCOM\\_privacy%20policy\\_ARM.pdf](https://www.ucom.am/file_manager/poa/20190603_UCOM_privacy%20policy_ARM.pdf) :
- <sup>xxxv</sup> Անձնական տվյալների մշակման քաղաքականություն/անձնական տվյալների մշակման մասին ծանուցում, III բաժին,  
[https://www.ucom.am/file\\_manager/poa/20190603\\_UCOM\\_privacy%20policy\\_ARM.pdf](https://www.ucom.am/file_manager/poa/20190603_UCOM_privacy%20policy_ARM.pdf) :
- <sup>xxxvi</sup> Գաղտնիության քաղաքականություն, բաժին D, <https://www.mts.am/more/Legal-Information/Privacy-Policy> :
- <sup>xxxvii</sup> Գաղտնիության քաղաքականություն, բաժին B, <https://www.mts.am/more/Legal-Information/Privacy-Policy> :
- <sup>xxxviii</sup> Գաղտնիության քաղաքականություն, բաժին 7, <https://www.telecomarmenia.am/hy/privacy-policy> :
- <sup>xxxix</sup> Գաղտնիության քաղաքականություն, բաժին 7, <https://www.telecomarmenia.am/hy/privacy-policy> :

- 
- <sup>xi</sup> Անձնական տվյալների մշակման քաղաքականություն/անձնական տվյալների մշակման մասին ծանուցում, IV բաժին,  
[https://www.ucom.am/file\\_manager/poa/20190603\\_UCOM\\_privacy%20policy\\_ARM.pdf](https://www.ucom.am/file_manager/poa/20190603_UCOM_privacy%20policy_ARM.pdf) :
- <sup>xli</sup> Անձնական տվյալների մշակման քաղաքականություն/անձնական տվյալների մշակման մասին ծանուցում, IV բաժին,  
[https://www.ucom.am/file\\_manager/poa/20190603\\_UCOM\\_privacy%20policy\\_ARM.pdf](https://www.ucom.am/file_manager/poa/20190603_UCOM_privacy%20policy_ARM.pdf) :
- <sup>xlii</sup> Գաղտնիության քաղաքականություն, բաժին C, Անձնական տվյալների մշակման պայմանները,  
<https://www.mts.am/more/Legal-Information/Privacy-Policy> :
- <sup>xliii</sup> Գաղտնիության քաղաքականություն, բաժին 7, Անձնական տվյալների պահպանման ժամկետները,  
<https://www.telecomarmenia.am/hy/privacy-policy> :
- <sup>xliv</sup> Գաղտնիության քաղաքականություն, բաժին 8, Անձնական տվյալների ոչնչացումը,  
<https://www.telecomarmenia.am/hy/privacy-policy> :
- <sup>xlv</sup> Անձնական տվյալների մշակման քաղաքականություն/անձնական տվյալների մշակման մասին ծանուցում. Որքա՞ն ժամանակ են պահպանվում Ձեր տվյալները,  
[https://www.ucom.am/file\\_manager/poa/20190603\\_UCOM\\_privacy%20policy\\_ARM.pdf](https://www.ucom.am/file_manager/poa/20190603_UCOM_privacy%20policy_ARM.pdf) :
- <sup>xlvi</sup> Գաղտնիության քաղաքականություն, բաժին F, Բաժանորդի իրավունքներն անձնական տվյալների վերաբերյալ, <https://www.mts.am/more/Legal-Information/Privacy-Policy> :
- <sup>xlvii</sup> Գաղտնիության քաղաքականություն, բաժին 9, Ձեր իրավունքները,  
<https://www.telecomarmenia.am/hy/privacy-policy> :
- <sup>xlviii</sup> Անձնական տվյալների մշակման քաղաքականություն/անձնական տվյալների մշակման մասին ծանուցում, Բաժին VIII, Ձեր իրավունքները,  
[https://www.ucom.am/file\\_manager/poa/20190603\\_UCOM\\_privacy%20policy\\_ARM.pdf](https://www.ucom.am/file_manager/poa/20190603_UCOM_privacy%20policy_ARM.pdf) :